

# ՎԱՐԺՈՐԵԴ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՐԵԴԻԱՆ ԱՄՍՈՂԹԻՔ

ԱՊՐԻԼ

1883 Ա. ՏԱՐԻ

№ 9

ԱՅՐԵՆԱՐԱՆԻՑ ԵԵՑՈՑ ԿԱՐԴԱԼՆ ՈՒ ԳՐԵԸ

Խ. Կ. Ռ. Վ. Շ. Բ.

Ալբերնարանի նիւթը մշակելուց յետոյ ռւսուցման նըպատակն է վարժել երեխաներին կարդալ նոփի և առաջ բառերով, յետոյ նախադասութիւններով։ Բառերով կարդալիս պահանջուած է որ երեխաների ոչքը միանգալից ըմբռնէ ամրողի բառը, մինչդեռ նախադասութիւններով կարդալիս միշտ ըմբռնում է յաջորդ բառերից մի քանիսը, երբ արտասանուած է նախարզը։ Բառերով կարդալիս թէև իւրաքանչիւր վանկ ուղիղ է արտասանուած, սակայն նախադասութիւնան բուլոր բառերին մի և նոյն նշանակութիւնն է վերազրուած։ ընդհակառակը նախադասութիւններով կարդալը մի քանի բան ընդունում է իրեւ առաւել ծանրակշիռ, ուրեմն և ենթադրում է մի որ և իցէ գատողութիւն կարդացողի կողմից։ Եւ զա կարօղ է տեսի ունենալ միայն այն ժամանակ, երբ երեխանները ձեռն բերելով բառերի վարժ ընթերցանութիւնը, փոքր առ փոքր ընտելանում են իւրեանց հայեացքով արագ արագ անցնել ամբողջ տողերը։ Ուստի և զա չը պիտի պահանջուի աշակերտներից ժամանակից առաջ, Հակառակ գիւղուածուած աշակերտները կը սկսեն կամ մի և նոյն բառը մի քանի անդամ կը կննել, մինչև որ յաջորդ բառերը կընդգրկեն իւրեանց հայեացքով, կամ թէ ծանօթ, բառերը կը կարգան հեշտաւթեամբ, իսկ գեւուարների վերալ կանգ կառնեն։ Այս

պէս նաև բառերով կարդալը չը պիտի ժամանակից առաջ  
 պահանջուի, քանի որ երեխաները դեռևս դժուարանում են  
 հեգելով կարդալ (*մուր-ճ=մուրճ*) հակառակ դիմուածում  
 երեխաները կը սկսեն կարդալ գուշակելով։ Ուրեմն հարկա-  
 ւոր է յառաջգնալ մեծ նախազգուշութեամբ։ Միշտ պիտի  
 հեգելով կարդան, երբ մի որ և է բառ դժուարութիւն է  
 պատճառում, նմանապէս իւրաքանչիւր նախազասութիւն  
 պիտի կարդացուի նախ և առաջ բառերով։ Սկզբումը հե-  
 գում են միշտ ձայներով, իսկ ուսուցման երկրորդ տարուայ  
 վերջին երեխաները հեգում են նշանազբերի անուններով  
 (այբա բեն, գիմ)։ Եւ այստեղ դժուար բառերը պիտի վեր-  
 լուծուին ուսուցչի օգնութեամբ։ Մենք չենք կարող այժմ  
 պահանջել երեխաներից կարդալ այս կամ այն բառը վան-  
 կերով. զասն դի չէ որ նոքա դեռևս չը գիտեն թէ որտեղ է  
 վերջանում վանկը։ Ընդհակառակն ուսուցիչը այստեղ ինքն է  
 մատնանիշ լինում թէ մինչեւ որ նշանազբերը պիտի կարդայ  
 աշակերտը։ Օր՝ ուշագրութիւն բառը կարդալիս, ուսուցիչը  
 անում է, կարդա առաջին գիրը, մինչեւ շատ, մինչեւ շատ,  
 մինչեւ շատ, մինչեւ վերջը թիւն բոլորը, մատնանիշ  
 նիշան։ Սակայն այս էլ պիտի անենք, որ եթէ ընթերցանու-  
 թեան համար ընտրած հատուածը ուղիղ է նախազատրաս-  
 տուած, այդ օգնութիւնը բոլորովին աւելորդ կը լինի։  
 Ուսուցման նիւթի մշակութիւնը այստեղ էլ տեղի ու-  
 նենում մեզ արդէն ծանօթ հինգ աստիճաններով։ Սակայն  
 գորանով մենք չենք պահանջում, որ իւրաքանչիւր հատուած  
 ընդունուի իբրև մի մեթոդական միութիւն և մշակութ բո-  
 լոր աստիճաններով։ Այդ դիպուածում ընթերցանութեան  
 վարժութիւնները շատ չնշին տեղ կը բռնէին ուսուցման մէջ։  
 Ուստի շատ հատուածներ մշակում են միայն առաջին եր-  
 կու աստիճաններով, իսկ յետոյ մի որ և է ուրիշ հատուածի  
 հետ նաև մնացեալ երեք աստիճաններով։  
 Նախ ամպատական առաջին երեխան առաջին եր-  
 կու աստիճաններով, իսկ յետոյ մի որ և է ուրիշ հատուածի  
 դիպուածութիւնները պիտի ամենուն ինչ,

որ նոցա համար անհասկանալի է, կամ նախադասութեան բովանդակութիւնից ինքն ըստ ինքեան չի պարզում և մութէ մնում: Եւ դոքա կարող են լինել առանձին բառեր՝ կամ նախադասութեան ձևեր: Նատերը այդ օրինակ բացատրութիւնները տալիս են մի որ և է հատուած կարդալիս կամ կարդալից լետոյ: Սակայն այս վերջինը ոչինչ միտք ու նշանակութիւն չունի, վասն զի գորանով մենք ստիպուած կը լինինք աշակերտներին կարդալ տալ այն բանը, որ գեռ ևս իւրեանց համար անհասկանալի է: Բայց աննպատակայարձար է նաև զանազան բացատրութիւններ խառնել կարդալիս, վասն զի գորանով մենք անընդհատ կը խզենք մտքի շաղկապը: Ի հարկէ ուսուցչի համար գա առաւել հեշտ է, քան լաւ նախապատրաստութիւնը, վասն զի այս վերջինը չը պիտի յառաջ գայ իբրև առանձին առանձին անկապ կտորներ, այլ միշտ պիտի կազմէ մի կապակցեալ ամբողջութիւն: Այն, գա շատ դժուարութեամբ է յաջնղում և պահանջում է երկար մտախոհութիւն, սակայն յաջնղուած նախապատրաստութիւնը միշտ վարձատրում է աշակերտների հետաքրքրութիւնը դէպի այն նիւթը, որ պիտի կարդացուի: Հարկաւոր բացատրութիւնները պիտի լինին որքան կարելի է կարճ և ընթերցանութեան դասերը չը պիտի ձեափոխուին, դառնան աշխարհագրութեան ու բնագիտութեան դասեր: Այդ պատճառաւ և այն նիւթը, որ պահանջում է չափազանց շատ բացատրութիւններ, պիտի ընդունուի իբրև անտեղի և ժամանակից առաջ ընտրուած, ուստի և անպէտք այդ պատճառաւ և մենք երկրորդ տարին գլխաւորապէս կարդում ենք այն նիւթը, որ առաջին տարին մանրամասն մշակուած է բերանացի:

Դորանից յետոյ ուսուցման առաջին տարիները, հատուածը կարդալուց առաջ, նախապատրաստում է նախ ընթերցանութեան արուեստական (տեխնիքական) կողմը և յետոյ դորան յաջորդող գրութիւնը: (Այս նախապատրաստութիւնն էլ է պահանջում մեծ հոգատարաւթիւն, և պիտի կատարուի անշուշտ գրաւոր կերպիւ: Միայն անփորձ ու ամենայն բանի վերայ թեթև աչքով նայող ուժուցիչներն են

կարող ալդ թողնել իւր ներքին ըոպէական թելադրութեան): Սլատեղ հարկաւոր է աչքի առաջ ունենալ հետևեալք: Ընտրած հատուածի բառերից զատերի ընթերցանութիւնը աշակերտին ծանօթ է արդէն մշակած նիւթից: Սոքա նախ և առաջ պիտի ընտրուին և կրկնուին, որքան այդ հարկը պահանջում է: Եւ այդ կրկնութեան ժամանակ բառերը պիտի վերլուծուին իւրեանց տարբերին, եթէ աշակերտները դժուարանում են կարդալ: Եւ ալդպէս շատ ուղիղ վարուած կը լինինք, վասն զի նախապատրաստութիւնը համաձայն իւր բնաւորութեան միշտ կրկին է անցնում այն ճանապարհը, որով գնացել է աշակերտը նիւթը իւրացուցանելիս: Սակայն նա ալստեղ չը պիտի վերադառնալ այն ամենապարզ տարբերին, որոնցից արդէն կազմուել են բարդ տարբեր, չը պիտի հեգել տանք ձայներով, եթէ վանկերով հեգելը արդէն անցած է, մենք կարող ենք դիմել պարզ տարբերին միայն երբ բարդերը դժուարութիւն են յառաջ բերում աշակերտի համար: Նոր բառերի ձայների խմբերից (պարզ վանկերից) շատերը ծանօթ են. սոցա հետ էլ ենք վարւում մի և նոյն կերպով: Օրինակելի բառերը ալստեղ մեզ մեծ օգնութիւն են տալիս. միշտ նոցա ենք դիմում հարկը պահանջած ժամանակը: Ձայների նոր կապակցութիւնները միշտ մշակում ենք ինչպէս և ալբենարանի նիւթը \*): Նոր բառերի ընթերցանութիւնը և դոցա առթիւ եղած վարժութիւնները իսկապէս վերաբերում են ուսուցման երկրորդ աստիճանին, որոնք և միշտ պիտի կատարուին հատուածը կարդալից առաջ:

Երկրորդ աստիճանի վերայ երեխանները կարդում են այդպէս նախապատրաստած հատուածը, որ և շարունակում է այնքան, մինչև որ ամենաթոյլ տշակերտներն էլ կարողանան վարժ կարդալ: Սլատեղ ինչպէս և առաջին ընթերցանութեան ժամանակ, ուսուցիչը պիտի ունենալ մեծ արուեստական լաջողութիւն, որպէս զի թէ աշակերտների մտադրու-

\*.) Մեր «Այրբենարանում» չը կան օրին. այնպիսի բառեր, որոնց մեջ գ-ն, ս-ն կարդացւում են ըզ ըս: Դոցա կարելի է փոքր առփոքր յառաջ բերել ընթերցանութեան վարժութեանց ժամանակ:

թիւնը լարած մնալ և թէ ընթերցանութիւնը չը կատարուի  
բոլորպին մեքենաբար, առանց մի որ և է յարաբերութիւն  
ունենալու ներքին բովանդակութեան հետ։ Ուստի հարկա-  
ւոր է աչքի առաջ ունենալ հետեւեալ։ Երեխաները նստած  
են ինչպէս հարկն է, բացած գրքի առաջ և ցոյց են տա-  
լիս կարդացուող բառի վերայ։ Չը պիտի մոռանանք, որ կար-  
դալու մեքենալի վերայ գործադրուող մեծ մեծ նշանագրերն  
և այբբենարանի ու ընթերցարանի մանր նշանագրերը երե-  
խաների համար ներկայացնում են բաւականին մեծ տարա-  
ծութիւն։ Բացի գորանից այստեղ յառաջ են գալիս շատ  
տողեր մէկը միւսի տակ շարուած, և երեխաները գեռ ևս  
չեն վարժուել ցոյց տալ և յառաջ գնալ այդ օրինակ տո-  
ղերի երկարութեամբ։ Այդ ըոլորը հեշտութեամբ շփոթում է  
աշակերտներին։ Որպէս զի այդ գժուարութիւնները միջից  
բարձուին, հարկաւոր է կարդացող տողն ու բառը անջա-  
տել տալ միւսերից մի թերթ թղթով ու փայտեալ ցուցա-  
նակաւ։ Բառը կարդալուց յետոյ աշակերտները ցուցանակը  
յառաջ են քաշում միայն ուսուցչի տուած մի որոշեալ նշա-  
նով։ Առանձին բառերի մէջ եղած ժամանակամիջոցը սկզբ-  
բումը տեսում է երկար, յետոյ կարճ, իսկ նախադասութիւն-  
ներով կարդալիս՝ ի հարկէ այդ անհետանում է։ Կարդում են  
առ հասարակ նախ՝ խմբովին, յետոյ առանձին առանձին աշա-  
կերտներ, իսկ երբ նկատուի տաղտկութիւն, փոխ առ փոխ  
մէկը կարդում է առաջին նախադասութիւնը, միւսը երկրորդ  
և այլն։ Թոյլ աշակերտները կարդում են ամենից յաճախ։  
Սակայն չը պիտի մոռանանք, որ աշակերտները շուտով բե-  
րան են առնում նախադասութիւնները և այն ժամանակը  
շատ անդամ կարդում են առանց ուշագրութիւն գարձնելու  
բառերի վերայ։ Ուստի բառերը կարդացում են նաև շար-  
քից գուրս. (օր առաջին, չորրորդը, վերջինը և այլն)։ Դէպի  
յետ կարդալ տալը տեղի է ունենում միայն իբրև բացառու-  
թիւն։ Եթէ աշակերտը կանգ է առնում բառերից մէկի վրայ,  
երբէք մի երկրորդը չը պիտի միջամտէ, այլ նա ինքը պիտի  
հեգէ իւր մտքումը կամ բարձր ձախով։ Մեծ խստութեամբ  
հարկաւոր է պահանջել նաև, որ ցոյց տան կարդացուող

բառի վրալ։ Առանձին աշակերտներ կարդալիս՝ նախ յառաջադէմներն են կարդում, լետոյ թուլերը։ Այսուամենանիւ այբբենարանից լետոյ դեռ առ ժամանակ հարկաւոր է շատանալ թուլերին միայն բառ առ բառ կարդալ տալով։ Իւրաքանչիւր հատուածի ընթերցանութիւն իւրացուցանում են միշտ նախադասութիւն առ նախադասութիւն։ Նախընթաց նախադասութիւնները միշտ կրկնում են իւրեանց յաջորդների հետ, մինչև որ ի վերջոյ կարողանան ազատ կարդալ բոլոր հատուածը։ Միայն ապագալում է կարելի ամբողջ հատուածը կարդալ տալ միանգամից։ Որպէս զի աշակերտները միակերպ չարտասանեն նախադասութեան իւրաքանչիւր բառ, պահանջին նայելով ուսուցիչը բացատրում է կէտերի նշանակութիւնը և կամ ինքն է կարդում հարկաւոր կտորը։ Նախադասութիւններ կամ ամբողջ հատուածներ կտրդալիս, ուսուցիչը պիտի առաջնորդէ իւր հրամանատուութեամբ (քանոնով խիելով) այնպէս, ինչպէս և խմբովին խօսելիս, թէ չէ ընթերցանութիւնը կընդունի շատ տաղտկացուցիչ ձև։ Կարդալից լետոյ առաջարկում են մի քանի հարցեր բովանդակութեան վերաբերութեամբ և կամ աշակերտները պատմում են բոլոր բովանդակութիւնը։

Երկրորդ տարուայ ուսուցման նպատակին մենք հասած կը լինենք, եթէ աշակերտները, մի որ և է նոր ու փոքրիկ հատուած մի կամ մի քանի անգամ մտքումը ծանը կարդալուց լետոյ, կարողանան կարդալ վարժ ու լաւ առողանութեամբ։

## 2. ԳՐԵԼԸ.

«ԳՐԵԼ» ասելով ալստեղ պիտի հասկանանք այն բոլոր գրաւոր վարժութիւնները, որոնք հարկաւոր են իբրև նախապատրաստութիւն լեզուի քերականութիւնը ուսումնասիրելու։ Համար։ Իբրև նպատակ երկրորդ տարուայ մենք մշակում ենք մի որոշեալ նիւթ այնպէս, որ երեխաները կարողանան այդ շընանում, պարզ նախադասութիւններով արտայալտել իւրեանց միտքը առանց ուղղագրական ու քերականական սխալների։

Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր վարժութիւնները կապակցում են ընթերցանութեան հետ։ Ընթերցանութեան հարուստ նիւթից յառաջադոյն կազմած ծրագրով մենք վաղօրօք ընտրում ենք մի քանի հատուած և գործադրում այդ նպատակաւ։ Ինչ որ այստեղ յառաջ է գալիս քերականութիւնից, հաղորդում է աշակերտներին ոչ թէ լեզուի տեսութիւնը ուսումնասիրելու նպատակաւ, այլ իբրև մի միջոց, որ ձեռնտու է լինում նոցա իւրեանց միտքը գրաւոր կերպիւ ուղիղ արտայայտելու։ Այդ օրինակ վարժութիւններ են օր. վանկերի բաժանելը, ձայնաւորների փոփոխութիւնը, ածանցական վերջաւորութիւնները, գլխադրերը և մի քանի կէտեր։ Գրաւոր վարժութիւններն են գլխաւորապէս՝ ճշառութեամբ արտադրելը, թելադրութիւնը և բերան առածի կամ ընթերցանութեան վերայ կազմած նախադասութիւնների գրելը։

Հատուածի մշակութեան առաջին մասը, այն է բովանդակութեան բացատրութիւնը, կարդալը, գուցէ նաև բովանդակութեան բերանացի պատմելը, այդ բոլորը արդէն կատարուել է ընթերցանութեան վարժութեանց ժամանակ։

Գրաւոր վարժութիւնները ուրեմն գործ ունին միայն լեզուի արտաքին կողմի հետ։ Այստեղ ամենագլխաւորն է ուղղագրութիւնը։ Բոլոր մեզ ծանօթ կամ դժուար բառերը, որոնց գրութեան ձեզ մեր մէջ կասկածանք է յարուցանում թէ այստեղ աշակերտները կարող են սիսալ անել, պիտի նշանակուին և գրատախտակի վերայ գրուին։ Այստեղ նոքա հեգւում են (սկզբումը ձայներով, իսկ ապագայում նշանագրերի անուններով — այբբեն, գիմ) իտոյ արտագրուում։ Որպէս զի պուաւել սերտ տպաւորուի այդ բառերի գրութեան ձեզ, երեխանները հեգում են նաև բերանացի և գրում գրատախտակի վերայ (սխալը այստեղ ուղղում է աշակերտների գործակցութեամբ) ՚ի վերջոյ գրում են իւրեանց քարետախտակների վերայ, առանց մի որ և է օգնութեան (բերանացի կամ թելադրութեամբ) և ուղղագրում։ Վարժում են մինչև որ կատարելապէս տէր գաղնան նիւթին։ Այստեղ մեծ նշանակութիւն է հարկաւոր տալ աչքերին։ Վասն զի երեխան բառերի

ուղղագրութիւնը ձեռն է բերում ոչ թէ վերացական մտախո-  
հութեամբ, այլ լոկ միայն վարժուելով և ընտելանալով:  
Ուստի և նորա աչքի առաջին չպիտի երկար կանգնած մնայ  
բառի սխալ պատկերը: Պարզ է, որ այդ պատճառաւ չպիտի  
թոյլ տրուի նա և, որ աշակերտները գրատախտակի վերայ  
բառը սխալ գրեն կամ գոնէ այդ օրինակ գրած բառը որ-  
քան կարելի է շուտով պիտի ուղղուի: Ցաւելով պիտի խոս-  
տովանենք, որ մեր երիտասարդների մէկը չիմանալով այդ  
հոգեբանական պարզ օրէնքը, ուղղագրական վարժութեան  
համար իւր երկրորդ տարուայ դասագիրքը լցնում է սխալ-  
ներով: Մեր այդ պարոնը չի հասկանում, որ երբ երեխան  
առաջին անգամ տեսնում է սեղանը զանազան իրերով, նա  
ապագայում սեղանի պատկերի հետ վերաբրտագրում է նաև  
այդ իրերը; որ միւնոյն բառի համար երկու զանազան տե-  
սակ պատկեր գիտելով, ապագայում երեխայի մէջ կարող են  
յերեան գալ նոյնպէս երկու պատկեր-մի ուղիղ և մի սխալ,  
և որ այդ պատճառաւ բոլորովին գիտուածից կախուած կը լի-  
նի, թէ դոցանից որը յառաջ կըգալ և կամ որը կընտրէ  
ինքը երեխան:

Որովհետեւ մեր լեզուի ձայները կորցրել են իւրեանց  
նախկին արտասանութիւնը և յաճախ գիմը արտասանում է  
երբեւ ք կամ զեն, ճէն իրբեւ չայ և ջէ, բենը իրբեւ պէ  
կամ փիւր ևայլն, և ընդհակառակն, միւնոյն ձայնի հա-  
մար մենք ունինք երկու նշանագիր (վ, ւ, ե, է, հ, ի),  
ուստի և ձայներով հեգելը շուտով անզօր է հանդիսանում  
ճշտութեամբ որոշելու բառերի գրութեան ձեւը: Առ ժամա-  
նակ՝ մի, այն, կարելի է օգնել դեռ ևս օրինակելի բառերով  
(չ ինչպէս բաժակինը), սակայն դա շատ ժամանակ է խլում,  
ուստի և անշուշտ հարկաւոր է լինում սկսել նշանագրերի  
անուններով հեգել տալ, որ և այնուհետեւ դառնում է մի  
միայնակ միջոցը բառերի ուղղագրութեան ձեւը արտայայտե-  
լու համար: Քանի որ ձայներով հեգելը դեռ ևս հարկաւոր  
է դժուար բառերի ընթերցանութեան համար, միշտ աշա-  
կելուները պիտի հեգեն փոխ առ փոխ մի ձայներով, մի  
նշանագրերի անուններով:

Ուղղագրական (հաեւ քերականական) նիւթը՝ այժմ ալնքան առատ է, որ անկարելի կը լինի յաղթահարել, եթէ նա երեխաների սեփհականութիւնը չը դառնալ կարգաւորեալ և սիստեմական կերպիւ։ Ուստի և լեզուի իւրաքանչիւր երևոյթ պիտի մշակուի կատարելապէս։

Երբորդ ասորիննի վէրայ թէ այժմեան և թէ առաջուան, այժմ պատահած լեզուի երևոյթների հետ որևէ է յարաբերութիւն ունեցող հատուածներից համախմբւում են բաղդատում և կազմուում որոշեալ յատկութիւններ ունեցող բառերի խումբեր կամ դասակարգեր։ Այդպէս են օրինակ մի առանձին նշանագրով գրւող բառերը գիւղ, գառը, ակացա-, եկա-, կերա-, տուա-, հայր, հազ, հագուստ, հետոյ, յաճախ, յամախ, յաղթել, յամառ, յալտնի ևալն։ Այդ օրինակ դասակարգերը կոչվում են միշտ օրինակելի բառերով (օր. հա- սի ւով գրւում են...) Առանց դորա լիշողութիւնը զուրկ կը մնայ հարկաւոր նեցուկից, ուստի և կը հրաժարուի ծառայելուց։

Չորրորդ ասորիննի վէրայ համանման առանձնայատկութիւն ունեցող բառերը համախմբւում են և կազմում դասակարգեր։ Նպատակայարմար կը լինէր եթէ այդ ուղղագրական շարքերը աշակերտները արտագրէին մի տետրակի այն է՝ «ուղղագրութեան բառգրքի» մէջ։ Միևնոյն կերպիւ պիտի վարուենք նաեւ, երբ դործ ունինք մի որևէ է ուղղագրական կամ քերականական կանոնի հետ։ Չորրորդ աստիճանի վերայ այդ կանոնը արտայատում է որքան կարելի է հակիրճ խօսքերով և իւրացուցանւում։

Բայց աշակերտը գեռ ևս պիտի ապացուցանէ, որ ոչ թէ միայն ճշտութեամբ ընդունել է իւրեան յանդիման կակացուցած նիւթը, այլ որ կարող է նաև գործադրել։ Ուստի և նորան թելադրուում է իւրացուցած նիւթը, նա գրում է իւր կազմած նախագասութիւնները (օր. հատուածի մէջ լիշուած իրերը ի՞նչ են անում, ի՞նչ են, ի՞նչպէս են), ընթերցած հատուածի բովանդակութիւնը ևալն։ Ամենայն ինչ, որ գրւում է, ՚ի հարկէ, պիտի կարգացուի և ուղղագրութիւնը տեղի է ունենուում ընդհանուր գործակյութեամբ։

(Որդէն՝ գրելու ժամանակն է կարող ուսուցիչը մի քանի սիալ՝ ի նկատի առնել):

(Կը շարունակուի \*)

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՅ

### ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈԽՍՈՒՑՈՒՄԸ

(Հարունակութիւն և վերջ)

Հայրենիք ասելով, պէտք է հասկանալ մանկան ծընընդեան տեղին, քաղաքը, գիւղը և ոչ թէ ամբողջ հայրենիքը: Ահա այդ պատճառաւ հայրենագիտութեան սկիզբը գտնուում է նոյն խսկ գիտողական ուսման մէջ, որը գործ ունի այնպիսի առարկանեցի և երևոյթների հետ, որոնց մէջ գտնուում են աշխարհագրութեան տարրերը, բայց մինչդեռ գիտողական ուսումը բաւականանում է ծանօթացնելով մանկանց իրենց զիջապատող առարկաների հետ, զարգացնելով նոցա մէջ գիտելու և մտածելու կարողութիւնները, մի և նոյն ժամանակ պահանջելով որ մանուկը գիտած առարկայի վերաբերութեամբ կարողանալ ճիշտ կերպով արտայալտել իւր մըտքերը, — հայրենագիտութեան ուսուցումը առաւել ևս առաջ է գնում. նորա մերձաւոր նպատակն է սիստեմատիքական կերպով դասաւորել համանման առանձին առանձին առարկաները և երևոյթները, որպէս զի կարելի լինի մանկան մտքի մէջ համախմբել դոցա և կազմել նոյնանման մտապատկերների կարճ և երկայն շարքեր: Որովհետեւ դորա նպատակն է թեթեացնել աշխարհագրութեան ապագայ զասատւութիւնը, այդ պատճառաւ և դա այն ժամանակն է իւր նպատակին հասնում, երբ մանուկը իւր արտաքին զգայարաններով ըմբըռնում է աշխարհագրութեան տարրերը:

«Իրական աշխարհի առարկաներն ու երևոյթները», ասում է Պեստալօցին, «ներկայանում են մեր աչքերին խառ-

\*) Տե՛ս «Լարժարան» № 8

նուած և 'ի մի համախմբուած։ ուսուցման գործն է պարզել այդ խառնութեղը, բաժանել, առանձնացնել առարկաները և երևութները իրարից, նմանները համախմբել 'ի մի և ալդակիով պարզութեան հասցնել նոցա։ — Ուսուցումը շարունակում է նու, այն ժամանակ կարող է այդ անել, եթե կը բաժանէ բարդ և խառնուած։ ընդհանուր մտապատկերները և կը ներկայացնի նոցա մեզ առանձին առանձին ու բաժան-բաժան, իրենց գանազան փոփոխուող՝ ձեւրով և վերջապէս կը կապկապի նոցա մեր արդէն առ ձեռն ունեցած մտաւոր շրջանի հետ։

Սոդպիսով՝ մանուկը ծանօթանալով իրեն շրջապատող իրական աշխարհի առարկաների և երեսութների հետ, ձեռք է բերում բազմաթիւ հիմնական աշխարհագրական տեղեկութիւններ, որոնք շարունակ կրկնուելով հաստատում են մանկան մտքի մէջ և ապագայում օգնում նորան հեռանար և անծանօթ երևութները բացատրելու և հասկանալու, ու միշտ նորը յարաբերութեան մէջ դնելով իւր դիտողութեամբ ձեռք բերած համանման մտապատկերների և դոցա շարքերի հետ։ Դեռ ևս այս չափով չը պիտի բաւականանայ հայրենագիտութիւնը. նա պիտի աշակերտին հասցնի այն կէտին, որ նա կարողանայ գիտակցաբար ըմբռնել նաև քարտէսը։ Իսկ գորան հասնելու համար պէտք է սանիկը կարողանայ նկարել իւր հայրենիքի քարտէսը, — ի հարկէ այնքան ճշտութեամբ, որքան կը ներեն նորա ոյժերը։

Ուրեմն հայրենագիտութեան խնդիրը մի քանի խօսքով կարելի է այսակէս ամփոփել. ա) Դիտելի կերպով ամրացնել աշակերտի լիշողութեան մէջ աշխարհագրական լեզուի տարրերը և նշանները — ուրեմն աշխարհագրութեան հիմունքները և բ.) Վարժել նոցա աշխարհագրական լեզուով արտայացնել իրենց տեսածը և մտածածը, ինչպէս նաև ճշտութեամբ հասկանալ այդ շրջանում բերանացի պատմածը և աշխարհագրական քարտէսը։ Սոդպիսով հայրենագիտութիւնը կը զարգացնի երեխալի մէջ ուշի-ուշով դիտելու կարողութիւնը, լիշողութիւնը, ինչպէս նաև մտապատկերների շարքեր կազմելու և նոցա վերաբարելու կարողութիւնը, —

իսկ այնուհետև ուղեղը կը վարժուի ճշտութեամբ ըմբռնեալու վերացական մտքերը և կը զարգանալ նորա մէջ ինքնագործունէութեան կարողութիւնը:

զ) Զը նայելով որ հայրենագիտութեան էութիւնը և նորա դասաւութեան ձեր գրեթէ բոլոր ուսումնարաններումն էլ մի և նոյն է, սակայն նորա աւանդելու չափը հանգամանքներին նայելով, տարբեր է զանազան ուսումնարանների համար: — ա) Նայելով ուսումնարանի նպատակին, հայրենագիտութեան չափն էլ փոխում է: Մեր գլորոցների նպատակը չի կարող լինել գիտնական հիմունքների վերայ հաստատել աշխարհագրութիւնը. այդպիսի նպատակ կարող են ունենալ բարձր բնակչութեան գլորոցները, ուր պահանջւում է, որ իրական առարկաների դասաւութիւնը մի տեսակ գիտնական պրայաւութիւն ունենալ: բ) Հայրենագիտութեան աւանդելու չափի երկրորդ պայմանն էլ այն է, ուր այդ առարկան աւանդում է մանկանց այն հասակում, երբ նոցա մը տաւոր ոյժերը այնքան թոյլ են, որ անկարող են իւրացուցանել բարդ արտայալութիւն ունեցող մտքեր. բայց այստեղ աչքի առաջ պիտի ունենալ այն ցընանը, որտեղից գուրս է զալիս երեխան: գ) Այնուհետև հայրենագիտութեան դասաւութեան վերայ մեծ ազդեցութիւն ունի նաև ուսումնարանի գիրքը և նորան շընապատու ընութիւնը: դ) Նայելով թէ մենք ինչ տեսակէտից կը նայենք հայրենագիտութիւն ուսուցանելու վերայ, ի հարկէ ըստ այն էլ կը փոփոխուի նորա աւանդելու չափը. նոքա, որոնք հայրենագիտութեան վերայ նայում են իբրև առանձին առարկալի վերայ, ի հարկէ առաւել են ընդարձակում նորա ստհմանները, քան թէ նոքա, որոնք նորա վերայ նայում են որպէս պատրաստական աստիճան աշխարհագրութեան: ե) Եւ վերջապէս նորա սահմանները բոլորովին կը փոխուին, եթէ ընդունենք այն կարծիքը: թէ հայրենագիտութիւնն է հասարակ գիտողական ուսումն աշխարհագրական կէտից առնելով: նոյն իսկ այդ առարկալի դասաւութեան բովանդակութիւնը փոխուած է, նայելով: թէ բնչ յարաբերութեան մէջ կը գնենք նորան աւանդելի միւս առարկաների հետ...: Մի քանիսները հայրե-

նազիտութեան հաւասար տեղ են տալիս գասատւութեան միւս առարկաների շարքում. միւսները նորա նպատակը միաւորում են միւս առարկաների հետ. Այդ օրինակ միաւորութեան հետևանքն է տիեզերագրութիւնը, կամ ուրիշ խօսքով, իւր մէջ ամէն բան ամփոփող հայրենագիտութիւնը: Սակայն 9—10 տարեկան երեխալի գլուխը լցնել բազմաթիւ միմեանց հետ շատ մուժ կապ ունեցող մտապատկերներով, կը նշանակի ոչինչ չը սովորեցնել, որովհետեւ այդ դէպքում այն կէտը, որ մենք ուզում ենք պարզել աշակերտին, նիւթի բազմազանութեան պատճառաւ, գրեթէ բոլորովին թուլանում է և աղօտանում:

Հայրենագիտութիւնը ուրիշ առարկաների հետ կապակցելու ժամանակ, շատ զգոյշ պէտք է լինել, մանաւանդ այժմ, երբ ուսաման կենդրոնացուցման եղանակը մի առանձին նախապատւութիւն ունի և համարւում է միակ միջոց զանազան մանկավարժական զեղծումների առաջն առնելու, չը նայելով որ այդ կենդրոնացուցումը շատ անդամ արգելում է պարզ կերպով ըմբռնելու ամենահասարակ առարկաները:

Այս պատճառաւ հայրենագիտութեան ուսուցիչը շատ լաւ պէտք է որոշի իւր առարկալի (առանձին վերցրած) նպատակը և նորա առ միւս առարկաները ունեցած յարաբերութիւնը ու հաստատ մնալ իւր որոշման վերայ:

Իւրաքանչիւր դաս, որ ուսուցիչը կամենում է դիտելի կերպով հայրոգել իւր սանիկին, առաջ է բերում նորա մէջ որոշեալ քանակութեամբ մտապատկերներ, որոնք անդադար կրկնութիւններով և վարժութիւններով դառնում են մանկան սեփականութիւն. իսկ այդ լինում է այն ժամանակ, երբ արգելք չենք լինում նորա զարդացման, ուրիշ խօսքով. երբ թողլ ենք տալիս, որ մանկան միտքը փոքր առ փոքր անցնի առաւել բարձր իրերի քննութեանց: Այս պատճառաւ ուսումնարանական առարկաները բաժանում են զանազան մասերի և առանձին առանձին մշակում իւրաքանչիւրը, իսկ վերջը կապակցում միմեանց հետ:

Ուրեմն հայրենագիտութիւնը չը պէտք է խառնել դէ-

տողական ուսման և աշխարհագրութեան հետ, ինչպէս նաև լեզուի ուսուցման, նկարչութեան և մաթեմատիքայի հետ: Այս բոլոր առարկաները չը նայելով որ կարող են ներքին կազ ունենալ միմեանց հետ և օժանդակել միմեանց, քայլ նոցանից իւրաքանչիւրը պիտի մշակուի միւսներից բոլորովին անկախ:

Հայրենագիտութեան դասը աշակերտի մէջ առաւել լաւ տպաւորելու համար, ինչպէս նաև դասին կենդանութիւն տալու համար, ուսուցիչը կարող է զանազան արձակ և բանաստեղծական հատուածներ կարդալ, բայց նաև չը պիտի մտնի լեզուի կանոնների և գարձուածների մանրամասն քննութեան մէջ: Այդ լեզուի ուսուցիչը գործնէ: Թէպէտ և մանկան մտքի զարգացմանը պէտք է հետևէ նաև խօսքի զարգացումը ու դոքա պէտք է ձեռք-ձեռքի տուած միասին առաջ գնան:

Ցոյց տալով այն գլխաւոր պայմանները, որոնց պէտք է աչքի առաջ ունենալ հայրենագիտութեան նիւթը՝ ընտրելու ժամանակ, մենք աշքի առաջ ունենալով մեր ներկայ ուսումնարանների կազմակերպութիւնը, կաշխատենք դոցա համար. որոշել այն չափը, որով մեր կարծիքով պիտի բաւականանան դոքա: Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ չէ հայրենագիտութեան հիմք դնել բոլոր «հայրենիքը» իբրև մի ամբողջութիւն: Մեր նպատակի համար բաւական է ուսումնասիրել նորա մի մասը:

Այն նիւթից, որ մեզ տալիս է մեր ծննդավայրը, պէտք է ընտրել այնպիսի մասեր, որոնք կազմեն այն հիմունքները, որի վերայ ոլիտի տալագայում հիմնել ամբողջ հայրենիքի, աշխարհի մասերի, նշանաւոր տէրութիւնների, ծովերի և նոցա լատկութեանց, մթնոլորդի և նորա մէջ պատահող երևոյթների և այն առանձնապէս ուսումնասիրութիւնը:

Այս նպատակին կը հասնենք, եթէ մենք ծննդավայրը ուսումնասիրենք երեք տեսակէտից:

ա) Հայրենասպիտութիւնը՝ երկնքի կազմերը բացատրելուց լուց լետով, աստիճանաբար հեռանալով մօտիկից դէպի հեռուն, պիտի ծանօթացնի մանկանց՝ երկրի մակերեսութիւ ար-

տաքին կազմութեան հետ. ուշադրութիւն դարձնելով այն երևոյթների վերայ, որոնք մասնաւորապէս արտայացում են ջրի և հօղի բնական առանձնայատկութիւնները։ Մի և նոյն ժամանակ ուշադրութիւն դարձնելով նաև նոցա հետ կապակցուած աշխարհագրական համացողութիւնների վերայ։

բ) Կուլտուրացի մասին ևս խօսելու ժամանակ, պէտք է աշխատել առաջ բերել ամենաբնական երևոյթները, առանձնապէս ուշադրութիւն գարձնելով՝ մարդկային յարաբերութեանց միայն մի քանի ամենամօտ երևոյթների վերայ, որոնք առանց դժուարութեանց կարող են հասկանալի լինել մանկանց համար։ Օրպակ և հանդիրնչ լուսայուղափառ այսու։

ս) Եւ վերջապէս երկնքի մասին խօսելու ժամանակ պէտք է աշխատել բացարել ամենաշանաւոր երևոյթները։ Այսպէս օր՝ երկնքի չորս կողմերը, միջօրեականը, հորիզոնը, տարին և նորա մասերը, լուսինը և գլխաւոր համաստեղութիւնները։ Ի հարկէ հայրենագիտութիւնը չը պէտք է անտես առնի նաև տեղական բոլսերն ու կենդանիները; բայց դոցավերայ պէտք է նայել ոչ թէ բնագիտական տեսակէտից, այլ նորա համար միայն, որպէս զի՞ մանուկը կարողանայ առաւել պարզ կերպով պատկերացնել իրեն իւր հայրենիքի պատկերը։

Ինչպէս նաև վատ չի լինի, եթէ դասին կենդանութիւն տալու և դասը աշակերտի մէջ առաւել լաւ տպաւորելու համար, կարդացուի և կամ բերանացի սպամուի աշակերտներին այն պատմական լիշտակարանների մասին, որոնք դիտում են հայրենագիտութեան դասին։

Մեր վերը ասածները կարելի է ալսպէս ամփոփել.

լ. Հայրենագիտութեան չափը և սահմանները որոշելու համար պէտք է աչքի առաջ ունենալ՝

ա) Ուսումնարանի նպատակը և աշակերտների մտաւոր կարողութեան չափը։

բ) Հայրենագիտութեան վերայ ունեցած դադարարը։

գ) Նորա (հայրենագիտութեան) դիրքը, միւս առարկաների վերաբերմանը։

լլ. Հայրենագիտութեան դասընթացը իւր մէջ ամփոփում է երկու տեսակ տարրեր։

ա) Այդ տարբերից գլխաւորները աշխարհագրականներն են:

- 1) Հորիզոն և նորա կողմերը:
- 2) Ծննդատեղին ու նորա յատակագիծը:
- 3) Երկիրը իւր առանձնայատկութիւններով:
- 4) Զուրը իւր գլխաւոր բաժանմունքներով:
- 5) Մթնոլորդի երևոլմները:
- 6) Երկնակամարի ծանօթութիւնը:
- 7) Ծննդատեղի և նորա շրջակալքի քարտէսը:
- 8) Տեղական կուլտուրալի առանձնայատկութիւնները:
- 9) Սոցա վերաբերեալ խնդիրներ և վարժութիւններ:
- բ) Խոկ սոցա առաւել լաւ պարզելու համար, որպէս օգնական կարող են ծառայել՝
  - 1) Սոցա վերաբերութեամբ գրքի մէջ կարդացուած լոդուածների մասին խօսակցութիւններ.
  - 2) Բնական պատմութիւնը, երկը արդիւնաբերութիւնները և այլն.
  - 3) Խօսակցութիւններ տեղական պատմութեան մէջ երեւցող յայտնի անձնաւորութեանց մասին:

Ա. ՍՊԱՐԵՊԵՏԵԱՆ

ԵՐԱԾԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ պարունակած  
ԵՐԱԾԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ պարունակած

(Մի նորոգուած խնդիր հոգեբանութեան մէջ):

Մեր զրականութիւնը շատ է մանրացել: Նորա մէջ՝ իշխում՝  
է թեթևը, զուարձալիքը, այն ևս (զրպարտութիւն չէ այս) . . . ստու-  
րագոյն կարգից: Մենք ամենենին չենք փորձում փոքր ինչ  
բարձր ճաշակ զարթեցնել ընթերցողների մէջ: Միթե քիչ ունինք  
մասնագէտներ՝ իրաւաբաններ, բնագէտներ, ֆիզիքոսներ, քիմիա-  
կուներ, տնտեսագէտներ, բժիշկներ, ևայլն, որոնք կարող են  
հաղորդել մեզ թէ ուր են կանգնած իւրեանց գիտութիւնները,  
ուր են դիմում և ի՞նչ յառաջադիմութիւններ են անում նոքա:  
Բայց ինչո՞ւ լուս են մացել մեր գիտնականները — Մեր ոյժերը  
մեզ չեն բաւական ացնում: այս է այն ազգային անէծքը, որ  
մեր զրականութիւնը խոպանացած է թողնում:

Սակայն ժամանակ է իրար ճանաչելու և աւելի տգէտներից  
պատգամ ու հրահանգ չը ստանալու. թէ արտաքերողը և թէ քննո-  
ղը պէտք է գիտենան, որ ոչ ոք մեղանից երկնքի աստղեր չէ վեր  
բերում: Բայց այս իրաւունք չէ, որ ամէնքս անգործ մնանք և միայն  
իրար խանդարենք, — մեր ինքնասիրութեանը այս աւելի ձեռնուու  
համարելով: Դործի ժամանակ մըցումը էլե չի պակասի, և եթէ  
աւելի լաւագոյն գործող կայ, նա անշուշտ ինքնին կը նսեմացնէ  
իւր ընկերին: Բացի այս, եթէ այսպէս թափուր մնանք, ոչ ոք չէ  
գայ մեր գործը կատարելու. վերջապէս էլի մենք մեր ոյժեր ու պէտք  
է տաք է գործենք:

Ուրեմն թող «Վարժարանի» ընթերցողները չը գատապարտեն  
մեզ, եթէ փոքր ինչ մասնագիտական հարցով զբաղեցնենք նոցա:  
Բայց թող երկիւղ էլ չը կրեն, մեր խնդիրը ոչ հոգեբանութիւն,  
ոչ տրամաբանութիւն, ոչ փիլիսոփայութիւն է, գիտենք, որ մեզ չը  
պիտի ներուի դոցա մասին խօսելը: Մենք ընտրել ենք աւելի թե-  
թե բնաբան, այն է՝ երազը նրանք . . . սա լաւ նիւթ է մեր պա-  
ռաւների համար, որոնց ամբողջ փիլիսոփայութիւնն ու ապագայ  
գուշակութիւնը այդ աղբաւրից է ծագում: սա լաւ նիւթ է մեր  
լուսաւոր տիտանների համար, որոնք սարի գլխից արհամարհում  
են երազի չնչինութիւնը: սա լաւ նիւթ է ցերբերների համար,  
որոնք ամենայն հաւատարմութեամբ պահպանումեն հայկական աշ-  
խարհքը, որ մեջը ոչ մի ուսումնական խնդիր չարծարծուի: վեր-  
ջապէս սա լաւ նիւթ է այն փոքրամիւ ընտրեալների համար, որոնց  
մէջ գեռ չէ թմրել բան սովորելու իշելը:

Երազի մասին խօսելու պատճառն էլ այս է. «Զագրանիչ. Յնտ.» յունվար ամսին համարում թիւ Պրելի մի փաքը յօդուած կայ տպուած, որով նա ուզում է մի յեղափոխութիւն ձգել հոգեբանութեան մէջ. Յոյս ունենք այս հետաքրքրական, պիտի լինի նա և մեր մանկավարժների համար, որոնք հոգեբանութեան կարեորութիւնը քաջ ձանաշում են: Բայց Պրելը ուրիշ տեսակ ընթերցողներ, եւ օւնեցել աչքի առաջ և այնպիսի ենթադրութիւններ է անում, որոնց ծանօթութիւնը մեր գրականութեան մէջ պականում էնց Ուստի մենք նախ այդ ծանօթութեանց յիշատակութիւն կ'անենք: Եւ որովհետեւ երազն ու քունք շատ սերտ կապուած են իրար հետ, մենք վերջինով կ'ակսենք, մեր խօսքը՝ յանձնիր առաջ.

Ի՞նչ յադաբ քոյս ունեմ ուղարկեցի ունաւութեամաս ուղարկած պատմութեամասից առաջ առ առ մեջ ուղարկած առաջին առ առ մէջ յայտնի չէ, թէ, ի՞նչ է քունք: Թա մեր այն բնախօս սական (Փեղիօլոգ). վիճակ է, երբ մեր գետակցութեան արտայառութիւնները թուլանում կամ լիովին կաշկանդվում են: Ասում են, թէ սորա պատճառը այն պէտք է լինի, որ քնի ժամանակ ուզելը աւելի նուազ արին է ստանում: Քան արթնութեան ժամանակ Ան միջոցին զգայարակները իրանց պաշտօնը կատարել դադարում են: Համարոր շարժմանքները տեղի չունին, և նիւթերի փոփոխութիւնը խիստ նուազում է: Մենք փորձով գիտենք, որ քունք միշտ միակերպ չի լինում: Կայ թեթև մրափի և կայ խոր քունք: Անեղչինը շատ հանգիստ է և աւելի կարծ է տեսում իսկ թեթևը շատ անգամ անհանգիստ է լինում: Այս տարբերութիւնը նկատվում է նաև ամենայն քնի շարունակութեան ժամանակ: Քնի սկիզբը, ամենից խոր ու կազդուրիչ է: Այդ ժամանակ աւելի են հանգստանում մարմնի գործողութիւնները: Քնի տեսազութիւնն, ու նիստութիւնը կախում ունի կենցաղավարութեան շատ ազդեցութիւններից: Սույն վորութիւնից մի քանի դեռ ևս անյայտ անհատական պայմաններից: Բայց աւելի հասակից: Առողջ մանուկը արթնանում է միայն սննդուդ առնելու համար, և ամսականը ժամերօվ արթուն: Է մուսականը բայց մի տարին նորա: Քունքն աւելի է լինում: Քանի արթն սովորենը: և Յ-դ, ու Ա-դ տարում էլ երբեմն ցերեկը ևս քունքն է մոնում: Ամենախոր քունք մանկական հասակումն է: 5-6 տարեկանը քունքն է 5-10 ժամ: Հասակաւորը մօն 7 տամբ ծերը աւելի քիչ ժամանակ: Քնի խորութիւնը ճիշտ կարելի է որոշել մի ձայնի աստիճանի: Հետզինուէ մասնկութիւններով: Մը սկզբում արագութեամբ պայման այս դաշտու յիշատու գանգաղը քայլերով մի ժամ մից յիշատու իւր վերին ծայրին է համարաց: այստեղից գարձեալ ապա բագ ապա և դանդաղ սկսում է նուազանալ: 1½ ժամից յետոյ քնին

Խորութիւնը իջնում է իւր ծայրագոյն կետի մասին Զժամից յեայ —  $\frac{1}{8}$  մասին Աերջին ժամերին քունը շատ թոյլ է լնուամ բայց բաւական հաւասար խորութիւնը և զատ մարդիկ աւելի կամաց կամաց քուն են մոնում քան քնից զարթնում Քնի մեջ զգայարանքների զգաստութիւնը հետզիետ թուլանում է մարմնական պահառութութիւնները նուազ և նուազ նկատելի են դառնուամ նկանները մի առ մի հրաժարակում են զօրծելու և լսողութիւնը ամենից երկար զգաստ է մոնում ։ Զատ գդուար է քնի սկզբին արթնանալը և եթէ այնուհետեւ արգելք լինի կրկին քնելը գլուխը ծանրանում է խոնջութիւն է գալիս տչաճութիւն և մտածելու անկարողութիւն է տիրուած ։ Խոկ եթէ քունը կարծ միջոցով ընդհատում այնուհետեւ նա աւելի խոր կը լինի քան թէ չընդհատուեր և եթէ քունը կանոնաւոր կերպով ընթանայ արթնողը կատարեալ կերպով հանգստացած կը լինի նա այնքան անօթութիւն չե զգուած թէ և բաւական ժամանակ ոչինչ մոնուդ չէ ընդունել նորա զգայարանքները թարմացած ուշագրութիւնը ընդարձակած է նա նորոգուած է ամենայն տեսակ մարմնական և հոգեկան նոր աշխատութիւնների համար ։ Բայց այս աղդեցութիւնները թուլանում են և եթէ քունը աւելի է աւելի քան հարկաւոր էր Քնի վերջին նորագում զգայա րանիները սկսում են զգաստանալ երաշները աշխատութանալ այնկ նոցա աղդեցութիւնը մարմնի վերայ սաստկանալ մկանները թէ այն աղես հանգիստ չեն գաղմուածքը հետզիետ մերձենում է այն պայչ մաններին որոնք արթնութեան յատուկ են և մի տեսակ կիսան քուն վիճակ է ստանում երբ արտաքին աշխարհի հաղորդակցութիւնը քիչ քիչ հանտառվում է այնպիս որ մի ոչնչին արտաքին կամ ներքին առիթ արթնութիւն է կոչեմանական ։ Հայուայ

Բնախօնութիւնը միայն ընդհանուր գաղափար ունի թէ մարմնական և հոգեկան գործողութիւններին պարբերական հանգստիւթիւն է հարկաւոր բայց թէ որոնք են այն բաղմաթիւ բայց մայմանները (թէ հոգեկան և թէ մարմնական) որոնք արթնութեան և քնի ժամանակ անդառնալի կերպով հետզիետ մարմնին մի նոր վիճակ են սալիս գեր չե կարողանում վճռապես Արգելք կայ մի առանձին գործարան քնի համար կամ ուղեղեղի մէջ կամ կամուածքի ուրիշ մասներում այս էլլավիճելի է Այսքան ցայ տնի է որ մարդու մէջ աւելի է կանոնաւորութած քնի պարբերականութիւնն ու խորութիւնը Այս վենդանիները նորոնք կանգնած են քնում աւելի մատենում են արթնութեան վիճակին և աւելի թեթև քուն ունին ինչպէս օր ։ Թռչունները Միջատները կանոնաւոր կերպով չեն բաժանում օրուայ ընթացքը քնի և արթնութեան համար ։ Զատ կաթնասուններ սղուաններ ձկներ և ուրիշ մանր կենդանիներ ամբողջ ձմեռը թմրութեան մէջ են ընկնում ։

որ ինոր քնի կատարեալ օրինակ է, ուր մարմի գործողութիւնները նուազում կամ՝ աւելի ճիշտ ասել՝ վերանում են: — Քնի պատճառներ շատ են՝ քուն է գալիս մարմական և հոգեկան խոնջութիւնից, զգայարանների տպաւորութիւնուց պակասութիւնից կամ նոցա շարունակ միակերպ աղգեցութիւնից (հիպոտիզմի գլխաւոր չնար), նաև սառնութիւնից, ստամոքսի խիստ բեռնաւորութիւնից, ոգելից ըմպելինների ու մի քանի թոյներից (նարկոտիքա): Եթէ արթնանալուն նպաստում են երազատեսութիւնները, մի քանի մարմական հանրազգացութիւնները, ինչպէս զոր օր, աղիքներում աղպ կամ փամփուշտի մէջ մէզ լցուելով է առաջանում: Արթնացնելու արտաքին հնարներ են՝ զգայարանների աղջմունքներ, այն է ձայն, պայծառ լցու, կաշուի նեարգների գրգումներ: Սովորական տպաւորութեանց յանկարծակի գաղարումն էլ արթնացնում է, քարազպանը զարթնում է, եթէ աղօրիքների սովորական թխկթխկոցը կանգնի: — Քնի մէջ մարմական առանձին գործողութիւնները այսպիսի փոփոխութիւններ են կրում: քուն եղած հասակաւորի երակը 3+10 զարկով թուլանում է, մանուկների մէջ այդ տարրերութիւնը աւելի մէջ է լինում: Քնած ժամանակ շնչառութիւնը աւելի նուազ և թեթև է, քան արթուն ժամանակ: Նորա տեսղութեան ժամանակ մէզը գրեթէ կիսով չափ պակաս է արթնութեան ժամանակ թողած քանակից, բայց այն ժամանակի միջածը աւելի թանձը է նիւթերով նիւթերի փոփոխութիւնը իւր ամենայն մասերով խիստ դանդաղ է: Բոլոր արտաթորութիւնները պակասում են ամրազութիւնն ու հեղուկների ծծուիլը շատ նուազում են: Աերգանական ջերմութիւնը քչանումէ, որով մարմինը չիշտ մրսելու վիճակ է ստանում: և տաք ծածկուելու պահանջ է ստանդամ: Աքնի շարունակութեան ժամանակ ջերմութիւնը  $\frac{3}{4}-1^{\circ}$  8ելս: Իջնում է արթնութեան սովորական չափի բարձրութիւնից: Աամքին հպատակած մկանները այնքան աւելի անշարժ են մնում: որբան քունը աւելի խոր է: Քնի բոլոր շարժումները, նաև երազողի կիսագիտակցական ձկումները լինում են շատ անշնորհք ու աննպատակ: Այն ինչ անդրագարձ երեսյթները այդ ժամանակ շատ յաճախում են: Թեթև քունը և մանաւանդ աշխոյժ երազները առաջանում: առաջանութիւնների շատ, հատ շարժումների գեմքի փոփոխութիւնները շնչառական մկանների չափարերական գործողութիւններ: Երազողը խիստ եռանդի մէջ կարող է վերնստել մինչև անգամ անկողինը թողնել: Մկանց վիճակները պէս մութ հանրազգացութիւններ են գոյացնում: այս պատճառով շատ խոր նիրհածը փոփոխում է իւր անդամների անյարմար դիրքը, եթէ վերջնը բաւական շարունակում է: միզափամփուշի լցուելուց առաջացած մկանական զգայութիւնը պատճառ է դառնում:

զարթնելու, և այլն։ Զգայարանքների նրբաղդածութիւնը խիստ թուլանում է, բայց և այնպէս նոցա հաղորդակցութիւնը արտադրքին աշխարհական աշխարհի հետ լրիւ չեղական կարգութիւնը արտաքին աղջեցութիւններով անդրադարձ ներդործում է, եթէ նոքա բանական հզօր են կամ անընդհատ շարունակվում են. նա մինչեւ անդամ զարթնում է, եթէ սովորական աղջեցութիւնը յանկարծ դադարէ։ Սակայն պղտորած գիտակցութիւնը արգելք է լինում, որ զգայաց բանքների գրգիռները անշփոթ ըմբռնում և մեկնում են, այնպէս որ արտաքուստ ստացած տպաւորութիւնները շատ անկատար են. և միայն երազներին ուղղութիւն տալ կարողանում են. Քնի ժամանակ հոգեկան գործողութիւնները արտայայտվում են երազներով որոնց նկատմամբ նշանաւոր են հետեւող հանգամանքները։ Երազը միշտ ծնում է ակամայ և այնպէս մոլորեցնում է, որ մեր երեակայութեան ցնորդները մենք իրականութիւն ենք համարում։ Երազի մէջ գիտակցութիւնը ոչ մի ժամանակ կատարեալ աղատութեամբ չի գործում և սովորաբար շատ խիստ խափանվում է իւր ընդունակ ուղղութիւնից։ Մեծ մասով երազը թերի կերպով ենք յիշում։ Երբեմն բոլորովին մոռանում ենք, ուր միշտ անկարելի է դառնում նորա տեղութիւնը գատել։ Արդեօք հոգեկան գործողութիւնները քնի ժամանակ ի սպառ գագարել և վերանալ կարող են, այս խնդիրը գեռես անլուծելի է մնում։

Իսկ երազները պարզ ապացցից են, թէ քնի ժամանակ հոգին գեռ ելի գործել կարող է։ Երազի բովանդակութիւն կազմում են զգայարանական տպաւորութիւնները, յուղական զգացումները, մտածողութիւններն ու ձգումները, և երբեմն առաջինները այն քան կենդանի զօրութեամբ, ինչպէս որ արթնութեան ժամանակ է լինում այնպէս որ մենք կարծում ենք։ Թէ իրօք մեր առաջ առաջ կաներ և անձինքներ տեսնում լսում Ճաշակում և հոտոտում ենք։ Ճատ անգամ խիստ այլանդակ և անչեթեթ են և իրար հետ միաւոր վում ու հիւսվում են ամենատարօրինակ եղանակով։ Այդ միջոցին մի մտածողութիւն ևս առաջանում է կամ այնպէս, իրը թէ նոյն մտածողութիւնը մեր մէջ է արծարծվում և կամ այնպէս, իրը թէ նոքա ուրիշ անձանց ծնունդ են, որոնց հետ երազում հաղորդակցութիւն ունինք։ Մարդ այդ ժամանակ բաժանուած գոլով՝ ինքը մի ամբողջ բանագործութիւն (գրամա) է կազմում իւր երազի մէջ։ Մաքերն էլ երբեմն տրամաբանական գատողութիւններով ու եղբակացութիւններով են առաջանում իսկ ուրիշ անգամ հակառակ ամենայն բանականութեան, ուստի և արթնելուց յետոյ յիշութեան մէջ կատարեալ անմտութիւն են երեսում։

Երաղական պատկերացումներն ու մտածողութիւնները շատ շուտ փոփոխական են, բացի այդ՝ յիշողութեան մէջ լաւ չեն տպաւոր վում. Երաղի մէջ ոչ միայն գիտակցութիւնը ինքնին ստեղծում է ցնորսներ, այլ և նա կարող է առաջանալ իրական արտաքուստ տպաւորութիւնների ազդեցութեամբ, որոնք միևնույն տեսիլ շարունակ արթնացնելով՝ երաղին որոշ յարատեւութիւն և ուղղութիւն են տալիս, զոր օր. մի ցաւ, որ քնի ժամանակ անդադար ազդում է, երաղին նիւմ և բովանդակութիւնն առաջ կարող է, ու երջապես երաղի մէջ արթնած ցնորսները՝ կարող են շարժական նեարդերի վերայ ազդեցութիւն գործել այսինքն շարժողութիւններ առաջացնել որոնք երաղի բովանդակութեամբ հետ շատ սերտ միանումն, այնպէս որ երաղի մէջ մարդկասում ձեռք ու ոտք շարժում, կամ նա և անկողնից մռաչում է, և այլն. Այսպիսի երաղի ամենամեծ սաստկութիւնը՝ երկում է, գիշեր աշը ըստ մթեան կամ լուսնատութեան մէջ, չին և նոր ժամանակներում. հաւատացել են թէ երաղները՝ բարձր խորչութեամբ մէջ մարդարեական, կամ աստուածային գուշակութիւններ, են, բայց ոչ ինչ ապացոյց չը կայ նորա համար այսինքն ոչ մի ճիշտ օւսումնական, անհերքելի իրացութիւն չենք գտնում, որ նորա համարատրութիւնը լինի, թէ երաղները երբեմն յետոյ կատարվում են այս այնքան զարմանալի է, ինչքան որ այն ամենայն բանի կատարութիւնը որի ժանօթութեան տարերքը մաքին վաղուց տուել են զբաղում, և մորչելու վիճակ:

Երբեմն երաղները աւելի այլանդակ կերպարանք են առնում որոնք կոչվում են Մզ Ճալանջ (Cauchemar) և, մեր ժողովրդական առանպելաբանութեամբ, իրը թէ գոր կից, են առ աջանում: Մզալանջը կիսարթուն, և յատուկ հոգեկան վիճակ է, որը մարդու տիրում է քուն, մտնելով միջոցին կամ արթնանալուց մի փոքր առաջ, Մարդի մի ուրուական է տեսնում զանազան կերպարանք, առաջ, որ կանաչ ճիպուտը ձեռին, երբեմն լուի չափ պստիկանում, երբեմն երկինք գետինք պատող ամպ է գառնում, կողպած գուներով ներս և մտնում, քնողի կրծքի վերայ և նստում նորան ճնշում, ինեղումնեւ և սոսկալի զարչուրանք է պատճառում: Առ մարդ որ բորդութել հան գցնել է ու զում նա նկածում, և երաղներով տանջուել, նա փորձում է շարժուել կամ աղաղակել բայց ի զուր, նոկ եթէ ինքն իրան ոյժ և վնտահութիւն տալու յաջողում է, մշակալանջը կորչում է և տեսիլ ել անյատանում է, և սակայն արթներուց յետոյ մարդ զգում է իրան թուլացած, սրտի խիստ բարախում, քրտնքի մէջ լողացած, և միայն քիչ քիչ հանգստանալ է, սկսում թէ և մարդ կարծես զգում է, իբր թէ կուրծքը մի աշխագին ծանրութեամբ է ճնշվում, բայց և այնպէս խոր արտաշնչում և ներշնչում է, Կարծում են, որ եթէ մարդ, ան-

դադար միւնցին տեսակ երևոյթ է երազում, գոյցէ նեարդերից յատկառէս մինը կամ միւսը (աւելի համանականապէս) չնշառութեան նեարդերը ցաւագին կերպով գրգուվում է: Մասաւանդ նկատուել է, թէ մղձալանջը ծագում է աւելի մէջքի վերայ քնած, գլուխը քաշ ձգած ժամանակ: Ինչ որ առհասարակ երազներին նպաստում է այն ամենայն մղձալանջին էլ նիւթ կուտայ, այն է կոշտ կերակուր քնից առաջ աղիքների լցուիլը ստոծանիի ճնշումը չափաղանց աշխատութիւնը, նեղ հագուստը, արեան խափառումը սրտի և թոքերի անոթների մէջ: Մղձալանջը իսկապէս յատուկ հիւանդութիւն չէ, այլ հիւանդութեան նշանակ, թէ կուրծքն ու ստամքնը անկարգ գրութեան մէջ է, ապա ուրեմն գուցէ գժուար չէ այդ տեսիլներից աղատուիլը: Եթէ զգուշացուի վերը ի շած ինանգարող պատճառներից: Միայն մեր ժողովուրդը չէ հաւատում գրողներին, սատանաներին, ճիւաղներին—մղձալանջի պատճառուիլ ամենայն աղդ այդ հաւատն ունի, մինչեւ անգամ երբեմն Սորբոնն էլ չաստատեց (1318-ին) իւր ուսումնական իրաւասութեամբ այդ տելացնորութիւնը:

Բայց երազական կեանքը մի քանի զարմանալի երևոյթներ է առաջնում: որոնց կատարեալ մեկնութիւն տալը դեռ ևս անժամանակ է: այսպէս են այն բաղմաթիւ երևոյթները, որ ընդհանուր անուամբ լուսնութութիւն կամ քնէ ածութիւն են կոչում: Այսպէս է կոչվում քնահամար գեղեցիկ թափառութիւնը: յետոյ սոլորութիւն գարձած քնի ժամանակ ակամայ գործողութիւններ, որոնք կամաւորի պէս են թուլում: ապա՝ և այն ինքնախափ գէպքերը: ուր մարդիկ այնպիսի իրեր և առարկաներ տեսնել կարծում են, որ առողջ զգայարանքներին անմատչելի են (անզելք գնալը ինչպէս որ Վանեցիք ասում են): վերջապէս՝ դեռ ևս կարծիքաւոր մնացած բոլոր միւս երևոյթները՝ կենդանի մասնիս կամ առ առ մասնիս կարգից: Իսկական լուսնուութիւնը աւելի այն զարմանալի նշան ունի, որ այդ ժամանակ քնի բնական կարգը կործում է: և գիտակցութեան գագարման հետ ի միամին այնպիսի գործողութիւններ են երևում: որոնք կամաւոր և նպատակաւոր գործողութեանց բոլոր նշաններն ունին: Նա մի քանի նմանութիւն ունի մղձալանջի հետ: ուր գիշերային հանգստութիւնը իւանդարվում է: Մինչեւ այս օր դեռ չէ հաստատուած, իբր թէ լուսնուութիւնը մի արմատական տկարութիւն է: այնպէս որ կեանքը մահօռ վտանգի մէջ դնէ: ինչպէս որ ուրիշ ամենայն հիւանդութիւն իւր սաստկութեամբ կեանքի քայքայումն է առաջ բերում: Հատ բան, ինչ որ լուսնուութեան ժամանակ կատարեալ ձևով երևում է: առողջական քնի մէջ էլ նշմարվում է, որով լուսնուութեան առեղծուածը և

այլանդակութիւնը մասամբ մեկնվում է, թէ և խոստովանել պէտք է, որ նորա մի քանի գեպքերը ոչինչ բնախօսական մեկնութիւն չեն վերցնում: Խոր քունը՝ այսինքն երբ որ զգայութիւնն ու շարժումները իսպառ գաղարում են, շատ երկար չկ տևում: Իսկ այնուշետև քանի որ արթնութիւնը մերձենում է, այն դորժողութիւնները գրգռուել են սկսում և երբեմն այնպիսի սաստկութեամբ, որ մինչև իսկ քունը փախցնում են: Արդ հասարակ քնի և լուսնոտութեան ժամանակ առաջին տեղ բռնում է ինքնագիտակցութիւնը, ուր զգայարանքների և չանրազգաց խուլ ու մութազգերը հաւաքվում են և պէս պէս մտածութեանց ու կամեցողութեանց շվլթայակապ շարքեր են առաջցնում: Որով անդամները սկսում են համապատասխան յարմար շարժումներ կատարել մինչև անդամ կանոնաւոր յօդաբաշխ խօսակցութիւն արտայայտել: Բայց լուսնոտութիւնը մի քանի նշաններ ունի, որոնցով նա քնին էլ չի նմանում: Լուսնոտը ըստ նայելով սաստիկ աշխատութեան, երբ որ պատուհանների, տանիքների և ուրիշ բարձրութեանց վերայ մազլցումն է, կամ երբ որ զանազան շարժումներ է առաջցնում ծան: բութիւններ կրելով, բարձրացնելով, պարեր պարելով, և այլն, այնուամենայնիւ չի զարթնում: Որ անշուշտ տեղի պէտք է ունենար, եթէ - ինչպէս սովորական քնի ժամանակ է լինում: զգայութիւններն ու շարժումները իւրեանց սաստիկութեամբ ու նուազութեամբ ներգործել կարողանային գիտակցութեան վերայ: Ընդհակառակ, այն ինչ նոցա մկանները ամենայն զօրութեամբ գործում են, նոցա այնքան անզգայ են դառնում: Որ ոչ պայծառ լոյսը, ոչ թմբուկների աղմուկը, ոչ կծու հոտը (օր ամմոնիակ—անուշագրի հեղուկ): ոչ կոմմելը ու կոկծելը ոչինչ ներգործութիւն չեն անում: Բացի այս՝ լուսնոտի խօսակցութիւնը երազողի պէս խառնաշփոթ ու անկապ չէ, այլ մեծ մասով ողջամիտ տրամաբանական է, և ինչպէս իւր միւս գործերը, աւելի առաջուայ յիշողութեան շրջանի մեջ է սահմանափակուած: Նորա վերայ լուսնի ազդեցութիւնը անմեկնելի է, որ շատ անդամ կարծես դիտուել է, ուստի և անուն է ստացել: Բայց այն առասպելութիւնները լուսնոտների մասին: Իւր թէ նոքա ծառերի, տանիքների և աշտարակների վերայ մազլցելու ժամանակ շեշտակի լուսնի կողմն են զիմաւորվում: և քարշվում: ուր ամենայն սպառնացող վտանգներին մեծ ճարպիկութեամբ զգուշանում են, կամ թէ գմբէթների սուր հեծանների վերայ անվոանգ ճեմում են, և այլն: —դեռ այնքան իւրեանց շարժումները կատարում են, թէ և նոցա աչքերը պինդ փակուած են: Այս հանդամանքը այնպէս բացարել փորձեցին, թէ հաւատարմացած տեղեկութիւններ չեն, որ մի նշանակութիւն տանք դոցա: Բայց ճշմարիտ է, որ լուսնոտները մեծ վստահութեամբ

լուսնոտը յիշողութեան մէջ պինդ պահած ունի այն տեղերի բոլը հանգամանքները, ուր որ նա շրջըլումէ, և թէ միշտ այդ յիշողութեամբ է առաջնորդվում։ Սակայն յայտնի է, որ նորա անձանօթ տեղերումն էլ նոյն հաստատութիւն են ցոյց տալիք։ Լուսնոտութեան բժշկութիւնը գրեթէ անկարելի է համարվում։ Փորձել են մարմանական աշխատութիւններով մկանները յոդնեցնել՝ որպէս զի խոր և պինդ քուն առաջանայ. սակայն այս չկ օգնում գոնէ մի լուսնոտ աղատ չէ մնացել իւր պարրերական ախտահարութիւնից, չը նայելով որ ցերեկը անընդհատ հողէ վարել բժիշկները խորհուրդ են տալիս, որ լուսնոտը վերահսկողութեան տակ մնայ, որպէս զի թէ իւր անձին և թէ օտարներին վնաս չը բերէ, և պէտք է մի քանի պահեցական հնարիներ փորձուին։ — Դառնում ենք տեղէլք գնալու և մագնիսական քնարթնական երեւոյթներին։

Կենդանական մագնիսականութիւնը մի կարծիքաւոր զօրութիւն է, որ իր թէ կարող է մի մարդուց ուրիշին հաղորդուել վերջնի նեարդային հիւսուածքի մէջ առաջացնել յատուկ փոփոխութիւններ. այս է պատճառը, որ կենդ մագնիսականութիւնը իրեւ բժշկական հնար ևս գործ է զրուել (առանց յաջողութեան), Այդ զօրութեան դանողը Մեսմերն էր։ Նա 1775 թուին մի նամակ հրատարակեց մագնիսական բժշկութեան մասին, որով մեծ համբաւ ստացաւ։ Եւ իրօք Վեհնայի և Փարիզի մէջ մի քանի առերևոյթ յաջող բժշկութիւններ անելով այնքան հոչակուեցաւ որ Փրանսիական կառավարութիւնը ուղեց նորա գաղտնիքը գնել տարեկան 20.000 լիվը թոշակով։ Նա այդքանով չը բաւականացաւ, և մինչի վերջը իւր գաղտնիքը ամբողջապէս չը հրատարակեց, թէկ ստորագրութեամբ մեծ վարձատրութիւն ստացաւ։ Այս հրապուրիչ նորութիւնը այնքան հետաքրքրեց լուսաւոր աշխարհ։ Քին, որ տէրութիւնը հարկադրուեցաւ գործի քննութեան համար Զ մասնաժողովներ նշանակել մեծահամբաւ բնագետների և բժշկների (Լաւուազիէ, Բալիի, Բեն. Փրանկլին, և այլն) միջնորդութեամբ, որոնց վճիռը ձեռնատու չէր Մեսմերի հոչակին։ — Մինչև այս օր մեսմերականներ կան, թէկ արդէն քաջ յայտնի է, թէ ինչ է իսկապէս մեսմերականութիւնը։ Մինչև այսօր կան «մագնիսական քուն» բերող ձեռնածուներ, որոնք պէսպէս հանդիսական արարողութիւններով ցոյց են տալիս, թէ մի մագնիսական զօրութիւն կայ (միայն) իրանց ձեռքերի մէջ։ Նորա ձեռքերի զանազան շարժուածքներով մարդկանց վերայ, լուսնոտի վիճակի պէս, մի քուն են բերում։ և այն ժամանակ քնահարածը կատարեալ գերի է դառնում մագնիսայ։ Նող ձեռնածուի կամքին։ բաւական է, որ սա ամենաշնչին հնար գործ գնէ։ այն է՝ կամ փչէ, կամ հայեացք ձգէ, կամ հրամայէ։

և այլն։ Գերին այսպէս կորցնումէ ամենայն ընդունակութիւն որ և է արտաքին հաղորդակցութեան համար, բայց իւր և ձեռնածուի մէջ. իսկ սորա հրամանով ամենայն սեսակ գուշակութիւններ է անում և տեղելք է գնում. — Այն ժամանակը, երբ որ կենդ. մագ-նիսականութիւնը իւր հրաշալի երևոյթներով ծաղկում էր, մեզա-նից հեռու է։ Այժմ թէև գարձեալ կրկնվում է անչիմի յափշտա-կութիւնը, բայց յայտնի է, որ մէջը մի մոլորութիւն կայ՝ հաւա-տացողների մտաւոր շփոթութեանց վերայ հիմնած, իսկ եթէ իրօք միքանի անչերքելք դիտած երևոյթներ ես կան, նոքա մեկնվումնեն շատ սիալ կերպով և շտապով ընդհանրացնվում ու նոցանից ան-յայտ զօրութեան նոր օրէնքներ են հրատարակվում։ Այն իրողու-թիւնները, որոնց վերայ որ այդ երևոյթները հիմնուած են, աչա սոքա են։ Ան միքանի անձնաւորութիւններ (մանաւանդ կանանց սեռից), որոնց նեարդային հիւսուածքը (մեղ գեռ ևս անյայտ պատ-ճառով) ցաւագին, կերպով կամ սաստիկ է գործում կամ թոյլ սո-վորականից, բայց այնպէս, որ մի գործողութիւնը վերանում է, զորոր, առ ժամանակ արտաքին տպաւորութեանց անդայութիւն է գալիս, այն ինչ միւս գործողութիւնը, զորօր, երևակայութիւնը չափազանցութեամբ սաստկանում է։ Նկատուած են և այնպիսի անձնաւորութիւններ, որոնց զգայարանքները թէպէտ վերին աս-տիճան աշխուժութեն գործում, բայց արտաքին տպաւորութիւն-ները սիալ կերպով են հաղորդում գիտակցութեանը։ Այս ամեն երևոյթները, որոնց բոլորի հիմքը նեարդային համակարգութեան պէսպէս ցաւագնական փոփոխութիւններ են, ուսումնական գիտուն-ները մի են համարում։ Հիստէրիա անունով (արդանգացաւ)։ Արգանդահար հիւանդները մեծ հակում ունին ամենայն բան չա-փազանցացնելու և անչաշեւ կերպով կատակախաղի գնելու. նոքա անդադար շփոթեցնում են իրանց և ուրիշներին այնքան հաճու-թեամբ, որ չափազանցացնելու և շփոթեցնելու ախտը առաջին նշան պէտք է համարուի ամենայն արգանդահար հիւանդի մէջ։ Հատ բնական է ուրեմն, որ այդպիսի հիւանդները նպաստաւոր գործիք են կենդանական մագնիսականութեան մէջ և որ իրանք էլ մեծ սի-րով ենթարկվում են մագնիսացնողի ձեռնածութիւններին, հաւա-տալով սորա բժշկութեան հրաշքներին։ Անչաւատալի բան չէ, եթէ արգանդահարները կենդանական մագնիսականութեամբ առ ոլ-ջացել են, պարզ այն պատճառով, որ սկսել են հաւատալ այն մար-դուն, որը գեպի նոցա մեծ խնամքով էր վարուում, այնու հետեւ կատակախաղը էլ պէտք չէր գալիս իրանց։ Մի մոլեռանդ ցնորա-միտ, որ իւր մագնիսական ընդունակութիւններին անկեղծութեամբ հաւատում է և այս համողմամբ մի արգանդահարի է պատահում և նորինից փոխադարձ հաւատ է ստանում, — առ ելք կարող է

բժշկել, քան այն անձինք, որոնք կենդանական մագնիսականութիւնը իւրեանց համար վաճառքի արհեստ են շինել և ուրեմն միշտ խարերայ են: Կենդանական մագնիսականութիւնը ոչ մի բժշկական զօրութիւն է և ոչ արդէն յայտնի քննուած ուրիշ բոլոր բնական զօրութիւններից մի տարբեր բան: Նա միայն ծուռ մեկնած իրողութիւններ, մոլորութիւններ, մասամբ ևս խարերայութիւն է:

Չատ մասնաւոր փոփոխութիւններով այդ մոլորութիւնը կը կին և կրկին անդամ զբաղեցրել է մարդկային տկար մաքին, որ միշտ մէջը մի անյայտ գերբնական զօրութիւն է վնտուել: Մեսմերիզմ: օդոլիզմ: սեղանախօսութիւն, սպիրիտիզմ: հիպնոտիզմ: և ուրիշ այսպիսի անուններ նոյն կենդանական մագնիսականութիւնն են, որ մինչեւ այսօր էլ եւրոպայի և Ամերիկայի քաղաքներում հրաշամոլ պաշտողներ ունին: Արդի երեկելի բժիշկներից մէկը՝ Պարունակը, այդ մոլորութեանց դէմ Անգլիայում մաքառելով՝ ցաւելով յիշում է, թէ 20 տարի անընդհատ եւանդով պատերազմել է այդ տգիտութեան դէմ և այդքան ժամանակը փուչ բանի վերայ է կորցրել, որ աւելի օգտաւէտ ուսումնասիրութիւններին նուիրել արժէր. բայց, աւելացնում է նաև մոլորութիւնը այնքան մեծ է, որ մի ներքին պարտաճանաչութիւն դէպի մարդկութիւն իրան հարկադրել է չը զլանալ այդ ժամանակը մոլորութեան գարձի համար դէպի լոյս ճշմարտութիւնը: — Երեք տարի առաջ մի Հանդէն անուն ձեռնածու դարձեալ նոր աղմուկ հանեց Վիէննայի և Պետերբուրգի մէջ հիպնոտիզմով (արուեստական քնէածութեամբ): Բայց այս անդամ Զ քաղաքներում էլ ուսումնականները բոլորովին մերկացրեցին էութիւնը (Վիէննայում՝ Բիլրութ, Բրիւկկէն, Բենեդիկտը, իսկ Պետերբուրգում՝ մանաւանդ մեր երկրացի Թարխանովը): — Լրագիրներից հետեւալ տեղեկութիւններ ենք քաղում Պետերբուրգում տեղի ունեցած սէանսների մասին:

«Մագնիսական քնին» ենթակայ անձնքները յայտնեցին, ինչ որ զգացել և յիշում էին: Ամենքի ցուցումներից յայտնի երեսում է, որ այդպիսի փորձերը անվեսու չեն անցնում: Մի բանիսները փորձից յետոյ էլ շատ անդամ շշաճգութեան և թմրութեան մէջ են լնինում: Մի ուսանող, որ աւելի պինդ կազմուածք ունէր, պատմեց, թէ մինչեւ որ կամաւ ընդդիմանում էր քնանալուն, Հանգէնի ձեռնածութիւնները չէին ապագում նորա վերայ, բայց վերջը անձնատուր եղաւ, և այն ժամանակ քնածութիւնը սկսուեցաւ ամենայն արագութեամբ: Միւսը շատ յոգնեց և շարունակ սրտնեղութիւն էր զգումն որ չէ կարողանում ընդդիմանալ մինչի վերջ, կորցրեց գիտակցութիւն, թմրեց ու ուշաթափ եղաւ (հաստատուեցաւ, որ սրտի ախտ է ունեցել և ուշքի եկաւ բժշկի օգնութեամբ միայն Յ ժամփց յետոյ): Հայդէնհայնը Բերլինում ցոյց է տուել թէ Հան-

զէնի բոլոր երեսյթները կարելի է առաջ բերել հասարակ հնար-  
ներով, առանց գերբնական զօրութիւններին դիմելու, այն հըս-  
չակուած զօրութիւնը փոքք է. կատար բողի մէջ չէ, այլ  
քնածութեան համար մի քանի անձանց բնական  
հակման մէջ. Փորձերը ապացուցանում են, որ քնի ենթար-  
կուողը՝ մի պապղուն գնդակի վերայ մի միջոց մօտիկ աչք յարելուց  
յետոյ՝ քուն է մտնում (նոյնպէս ժամացուցի չշկչկոցով կամ  
ամենայն միակերպ տպաւորութիւններով), այնպէս որ երազում կա-  
րող է ման գալ պատասխանել հարցմունքներին, նպատակաւոր  
գործքեր կատարել. Նորա աչքերը փակ են, և ինքը քնածի գէմք  
ունի, բայց այն դիբքն է պահպանում: Ինչ դիբք որ փորձից առաջ  
ունեցել է, ուրեմն չի պարկում: Գլուխը չի խոնարհեցնում: այլ  
սովորական կերպով բարձր է պահում: Այսպէս նիրհածը կրկնումէ  
ամենայն ձայն, ինչ որ շուրջ լսում է (բառեր, ատամների կրճատում:  
շուրց: Համբար: և այլն). Եթէ ձայնը մի գործքի համապատաս-  
խան է, նա այն գործքն է սկսում: զորօր, իւր շուրջ մի քանի  
քայլերի ձայնը ստիպում է նորան ոտքի կանգնել և ուղիղ գծով  
ման գալ իւր փակ աչքերով: թէև մեծ վստահութեամբ: — Բացի  
այս մի քանի յատուկ շփումներով կամ ճշշումներով (համապա-  
տասխան գործ արանների կամ նեարդային կենդրոնների վերայ)  
նորա մկանները, ձեռքը, ոտքը և ամբողջ մարմինը ընկնում են  
ջղածութեան մէջ, իսկ այս վերջին գեպքում քնահարը մինչև ան-  
գամ բոլորովին փայտանում և քարանում է: Այսպէս քարացա-  
ծին գլխով ու ոտով գերանի պէս պարկացնում են Զաթոռի վերայ.  
փորի վերայ մի մարդ է նստում: և այս ծանրութիւնից քարացածը  
բնաւ չի ծովում: Յետոյ՝ գագաթի (գարձեալ յատուկ նեարդային  
կենդրոնի) շփմամբ ձեռքի ափով աչքը բացվում է և այսպէս քնա-  
հարը տեսողութեան տպաւորութիւններ առնելու կարողութիւն  
ևս ստանալով, կրկնում է բոլոր այն գործողութիւնները, ինչ որ  
իւր շուրջը օտարները անում են (ուրեմն ոչ միայն իւր մագնի-  
սացնողի արարքները): այսպէս էլ կատարում է ամենայն հրաման  
(գնա, կանգ արա, առ ժամացոյցը բաց արա, նայիր և այլն): Բայց  
փիտակցութիւնը, բոլորովին կորչում է. զորօր, ժամացուցի վերա-  
բերութեամբ ամենայն հրաման կատարում է, իսկ թէ «ո՞ր ժամն է»  
հարցին պատասխան չի տալիս, և միայն ժամացոյցը մօտեցնում է  
աչքին, ոչ թէ ճգնելով պատասխան գտնելու համար, այլ բթամը-  
տութեամբ աչքը տնկում է օգի մէջ: Նա տեսիլներ ևս ստանում է,  
բայց միայն ուրիշ խօսքերով: «Գնանք, ասում են նորան, կենդա-  
նաբանական այգին»: Նա սկսում է գնալ: «Կանգնիր, տես առիւ-  
ծին, զգոյշ կաց, նա քեզ կը պատառէ», — և նա զարհուրած գէմ:  
քով ու լայնացած աչքի բրով շուռ է գալիս և արագ արագ հե-

ուանում է, երբեմն յետ է նայում և ամբողջ մարմնով գողում է. հանգստանում է, եթէ ուրիշի քաջալերական իսօպեր է լսում, որ մի ապացոյց է, թէ նորա մոդերը շատ շուտ փոփոխական են և թէ ինքը բոլորովին խաղալիք է գառնում հրամայողի ձեռքի տակ, ով որ ուզում է լինի սա, մի և նոյն է:

Ուրիշ փորձերով աւելի հետաքրքրական չետեանքներ է առաջ գալիս, որտեղ նեարգային կենդրոնների կամ յատուկ գործարան, ների գերը շատ լաւ երևում է, Կարելի է մարդու մի կեսը (իսկապէս ուղեղի կեսը) քնի մէջ ձգել երբեմն աջ և երբեմն ձախ կողմը: Օտարի կամքով քնահարը անդամալուծվում է գէմքի միայն կիսով, հակառակ կողմի ձեռքով ու ոտքով, ուր այդ կողմը կորցնում է ամենայն զգայութիւն. իսկ եթէ ուղեղի ձախ կիսագունադր քնի մէջ ձգուի, անդամալցը ենթարկվում է աֆաղեայն ևս, այսինքն նամի և նոյն ժամանակ իսուելու կարողութիւնն էլ կորցնում է, բայց զիտակցութիւնը դեռ չի կորցնում: Այնպէս որ եթէ մի հարցմունք ստանայ, նա ջանքեր է անում պատասխանելու, բայց ոչ մէկ հըն. չիւն արտասանել չի կարողանում: Թէ նա ջանքեր է անում և գիտակցութիւնը ունի, երևում է նորանից, որ եթէ նորանից ինդրում են օտարը դրել նա գրում է օդի մէջ, թէև գժուարութեամբ, որովհետեւ նախ փորձում է սովորական կերպով աջ ձեռքի միջնորդութիւնը, իսկ սա անդամալուծուած լինելով, թողնում է. որ փորձը ձախով կատարուի: Աջ կողմի զգացականութիւնը իսուառ կորչում է. մի ասդի ծակոց, որ մինչև անդամ արիւն է հոսեցնում: Քնածին չի գրգում: որ անդրադարձ շարժմամբ ցաւից աղատուի, այն ինչ նա ձախ ձեռքը իսկոյն հեռացնում է, եթէ այդ կողմն է ծակվում: Բայց ինչո՞վ է առաջ բերվում այս միակաղմանի անդամալուծութիւնը, — լոկ միայն մի կողմից մազ սաներովը. այս կարող է փորձել ամենայն մարդ, որ ոչ «մագնիսական» զօրութիւն ունի, ոչ էլ դիւթական սանր: Մի խօսքով, այն ամենը ինչ որ Հանգենը իբրև հրաշք էր ուզում ցոյց տալ Հայդէնհայնը արգեն վաղուց նկարագրել է ամենապարզ հնարերի առաջարկելով, որոնք յաջողութեամբ գործ դրուեցան Պետերբուրգում: Գիտնական մարզիկ բանը շատ պարզեցնում են՝ առանց Հանգենի ձեռնածութիւնների: Միայն այսպիսի փորձերին ամենայն մարդ ենթարկուել չի կարող առանց վնասի, փորձողն էլ հմուտ մարդ պէտք է լինի, ապա թէ ոչ անփորձը չի իմանայ, թէ ինչպէս օգնէ վտանգածին, ի՞նչպէս զարթեցնէ, որ նորա մահու պատճառ չը դառնայ:

Երազական կեանքի մասին բաւական տեղեկութիւն ստացանք, որքան որ նորա բնախօսական (Փիղեօղդ.) ուղեկցութիւնները մեզ յայտնի են: Պարզ է, որ մեր հոգու և մարմնի մէջ մի անիզելի կապ կայ. պարզ է նոյնպէս, որ այս զարմանալի կապակցութեան

մէջ մի քանի մութ կէտեր կան, որոնց բացատրութեան համար քանի որ մարդ նոր նոր զօրութիւններ է փնտուել, վերջապէս անյաջող է գտնուել: Առ այժմ գիտութիւնը իրան յայտնի զօրութիւններից գուրս նորին չի ուզում զիմել, մինչև որ աւելի հաստատ ապացոյց չ'ունենայ նորը դաւանելու համար: — Աերնագրով նշանակած իննդրին զառնալուց առաջ, համառօտութեամբ յիշենք մեր հոգեկան կեանքի երեսյթները, որ շատ հարկաւոր կը լինի վերջին մասը քաջ ըմբռնելու համար: Մենք նկարագրեցինք արթուն կեանքը, հասարակ քունը երազներով և (ըսածին ու արուեստական) լուսնոտութիւնը, ի՞նչ տարբերութիւն կայ դոցամէջ: Եյդ ամեն դէպքերում անխտիր մեր հոգին գործում է, բայց շատ տարբեր եղանակներով: Լուսնոտութեան և հասարակ քնի երազների մէջ հոգին այնպիսի ազատութեամբ է գործում: ուր կամքը ոչինչ վերահսկողութիւն չունի նորա վերայ, ինչպէս որ այդ պատահում է արթնութեան ժամանակ: Բացի այս լուսնոտութիւնը արթնութիւնից և հասարակ երազներից տարբերվում է նորանով, որ «ենթակայ անձը» երբ որ ուշքի է գալիս՝ կատարեալ անծանօթութեան մէջ է: թէ ի՞նչեր է պատահել իւր հետ թմրած ժամանակի այսինքն իւր «երկրորդ գիտակցութիւնից» ոչինչ տեղեկութիւն չունի: Գալով երազախառն քնին՝ այդ ժամանակ բոլոր արտաքին գլուխարանքները փակվում են, այն ինչ լուսնոտութեան ժամանակ նոցանից մի քանիսը ոչ միայն զգաստ են, այլ և չափազնց նրբութիւն են ստանում: այնպէս որ լուսնոտի մտքերի ընթացքը կարող է շատ հեշտ կերպով այս կամ այն կողմ դառնալ արտաքին ազգեցութիւններով և զգայական այն խողովակներով: որոնք գեռ ևս բաց են մնացել: Սակայն այն ինչ հոգին հասարակ քնի վիճակի մէջ անզօր է մարմնական շարժումներ առաջացնելու, ինչպէս որ ինքն էլ անմասն է մնում զգայարանքների ազգեցութիւններից: — լուսնոտի հոգին ընդհակառակ կատարեալ իշխանութիւն է պահպանում մարմնի վերայ (գոնէ այն չափով, որ չափով որ զգայարանքները օգնում են նորան շարժումներ առաջացնելու), Ուրեմն լուսնոտը իւր երազները կատար ու մէ այնպէս, ինչպէս եթէ նորա իւր արթնութեան մտածմունքներ լինէին: — Եթէ հոգին այսպէս տարբեր կերպով է գործում իւր տարբեր վիճակներում, արդեզք նա մեզ կատարելապէս յայտնի է, թէ նորա այլ վիճակներ ևս կան, որոնց մասին մենք գեռ տեղեկութիւն չունինք: Աչա, այս հարցմունքի պատասխան է ուզում տալ վերը յիշած Պիւղելի յօգուածը:

(Ալ շարունակուի)

# ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

ԵՒ ՆՈՑԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ \*).

Խաղը նշանաւոր տեղ է բռնում թէ իւրաքանչիւր մարդու և թէ ազգերի մանկութեան մէջ: Վստահ կարելի է ասել, որ ամեն ժամանակի սերունդներ խաղացել են: Ամենահին ժամանակների պատմաբանները և իմաստունները բաւականաչափ ապացուցներ են թողել մանկան այս առաջին գործունէութեան մասին: Եւ կարող էր արդեօք ուրիշ կերպ լինել: Հենց որ մարդկային խելքը սկսեց պարապել կրթութեան խնդիրներով, նու ակամայ պէտք է ուշք դարձնէր մանուկների այն բնական պահանջին, որ նոքա իրենց մանկութեան առաջին տարիները պէտք է խաղի մէջ անցնեն: Միևնույն ժամանակ չի կարելի չը խոստովանել, որ կրթական գիտութիւնը աւելի ուշ խոստովանեց և գնահատեց խաղերի կարեւոր նշանակութիւնը, որպէս կրթողական միջոցների: Հին յուներն ու հռովմայեցիք, ինչպէս օրինակ՝ Պլուտարքոսը և նա մանաւանդ Կվինտիլիանը, Հիանալի նկատողութիւններ են թողել մանկական խաղի մասին. իսկ այնուհետեւ շատ հարիւրաւոր տարիներից լետոյ իբրև մանկական խաղի պաշտպաններ ասուլաբեց են գալիս հո-հանիսութը\*\*). որոնցից առաջին տեղը պատկանում է Երազմին: Սակայն սոքամիայն հատուկտոր ձախներ էին, որոնց վերայ, դժբաղ-

\*) Այս յօդուածը թարգմանուած է „Женское образование“ մանկավարժական ամսագրից. 1882թ. № 7:

\*\*) Հո-հանիսութը կոչվում են 1) նոքա, որնք համակրում են՝ այն ամենին, ինչ որ մադկային է. 2) Ուսումնականների մի գուսակարգ, որը կրթութեան անշրաժեցու առայմանն էր համարում հին դասական լեզուների ուսումնասիրութիւնը:

տաբար, բաւական երկար ժամանակ ուշք չէին դարձնում։

Մինչև անգամ ծան ծակ Պուստօն, որի նշանաբանն էր նշանաւոր խօսքս «բնականութիւն», շատ քիչ ուշադրութիւն էր նուիրում մանկական բնութեան այդ բնական պահանջին, —աւելի ևս, կարծես նա չէր հասկանում թէ ինչ մեծ նշանակութիւն ունին խաղերը մանուկների համար։

Պէտքառնէրը \*) երիտասարդաց կրթութեան վերայ ունեցած ազգեցութեան շրջանը ամենացաւալին էր մանկական խաղերի համար, թէ և ուրիշ դիպուածում նոցա մանկավարժական գործունէութիւնը շատ արդիւնաբեր եղաւ։ Օրինակի համար, Դպէնէրի այն կարծիքը, թէ ինքն իրան երբէք չի ներիլ, որ 12 տարեկան երեխայ եղած ժամանակը սիրում էր պարել, պարզ ցոյց է տալիս այս բարեպաշտ մարդու յարաբերութիւնները գէպի մանկական զուարձութիւնները։ Ֆրանկէն աւելի նպատակայարմար էր համարում իւր աշխատասէր աշակերտուներին մեծարել մրգերով և ուրիշ քաղցրաւէնիներով, քան թոյլ տալ նոցա զուարձանալ, խաղալ և երգել բաց երկնքի տակ։ Երիտասարդութեան բաղտից, այս ուղղութիւնը շուտով պիտի անհետանալ, չը կարողանալով տակաւին ջնջել երկրի երեսից զուարժ մանկական խաղերը։ Խաղերի համար նոր դարագլուխ սկսուեցաւ, երբ ֆիլանդոլոնէը (մարդասէրներ) մանկավարժական աշխարհում կարողացան ազգեցութիւն ունենալ։ Նախ և առաջ պէտք է յիշել ախտեղ Գուտմանուսի (Gutsmuths) անունը. նա առաջինը խոստովանեց խաղի վսեմ նշանակութիւնը և հնարներ ցոյց տուեց, թէ ինչպէս պէտք է օգուտ քաղել խաղերից դաստիարակութեան ժամանակ։ Այն ամենը, ինչ որ նա տեսականապէս քարոզում է իւր «Խաղերի ժողովածու» և «Մարմնամարզութիւն երիտասարդութեան համար» գրքերում, այդ բոլորը նա գործնականապէս ցոյց

\*) Պէտքառնէրը կազմում էին լուտէրական մի կրօնական աղանդ, որի յատկանիշն էր մաքուր բարոյականութիւնը և աւետարանի մէջ քարոզած առաքինութեանց բառացի կատարումն։

տուեց հասարակութեանը իւր Շնէպֆէնտալում ունեցած վարժարանում։ Այդպիսով հասաւ այն ժամանակը, երբ սկսեցին խոստովանել, որ կը թութեան գործում խաղին պատկանում է նշանաւոր տեղ։ Ներկայումս միայն կարող է այն հարցը զարթնել, թէ՛ ամենանոր մանկավարժութեան ներկայացուցիչները խաղերին արդեօք առաւել մեծ նշանակութիւն չեն տալիս, քան հարկաւոր է։

Այնու ամենայնիւ շատ հետաքրքիր է հետազօտել, թէ ինչումն է կայանում իսկապէս խաղի մանկավարժական նըշշանակութիւնը. և նախ և առաջ որոշել, թէ ինչ է խաղը։

Թօզէն կը անցը իւր «Մանկավարժութեանը իշրւ այսուբեմ»\*) հեղինակութեան մէջ խաղի նշանակութիւնը որոշում է այսպէս. «անհատի գործունէութիւնը, որի նպատակն է առարկայի վերայ իւր խորին ուշադրութիւնը կեղծոնացնելով, սեպհականել կամ ըմբռնել առարկան, ասվում է աշխատանք։ Իսկ խաղ անուանվում է այն գործունէութիւնը, երբ անհատը վերաբերվում է գէպի առարկան սլատահարար, կամայապէս, ամենեին չը հոգալով հետևանքների մասին»։ Մեր կարծիքով այդպիսի որոշումը բոլորովին սխալ է, որովհետեւ այն գործունէութիւնը, ուր տիրում է կոյր գիպուտածը, աննպատակ գործունէութիւն է, չարութիւն, և ոչ թէ խաղ։ Նշէ է ը ախէրն և Հեքբարտը իրաւացի են նկատում, որ խաղը պէտք է լինի որոշ, կանոնաւոր, որս պէս զի օգուտ բերի դաստիարակութեան գործին։ Մօլլէրը, Նմիդատի «Մանկավարժութակն հանրագիտութեան» մէջ զետեղուած «Խաղ» յօդուածի հեղինակը, ճիշտ կերպով որոշում է աշխատանքը խաղից, ասլացուցանելով, որ խաղալիս գործունէութիւնը դառնում է զլխաւոր նպատակ. այն ինչ աշխատելիս ոչ թէ նոյն իսկ գործունէութիւնը, այլ աւելի առաջադրեալ նպատակին հասնելը պատճառում է ճշմարիտ

\*) Սէսուբեմ (յուն.) Գիտութեան հաղորդելը խիստ յաջորդականութեամբ. մի քանի այնպիսի առարկաների միաւորութիւն, որոնք գործում են մի և նոյն օրէնքներով։

բաւականութիւն։ Մենք այդ զանազանութիւնն ընդունում ենք՝ միայն հասակաւորների խաղերի վերաբերութեամբ։ Բայց որպէս զի աւելի ճշտօրէն որոշենք մանկական խաղի նշանակութիւնը, պէտք է նկատենք, որ մանուկների խաղը էապէս տարբերում է հասակաւորների խաղից։

Համակաւորների խաղը՝—միայն միջոց է նպատակին հասնելու, որը կարող է զանազան լինել։ Մանկան խաղը՝ նոյն իսկ նպատակն է և խոհուն մտաւոր գործունէութեան արդիւնք։ Ֆան, Պառուլը իրաւացի է նկատում իւր «Լէյան» ընտիր շարադրութեան մէջ։ «Սովորական մանկական խաղերը մեր խաղերի նման չեն. նոքա ներկալացնում են ծանր, բայց այդպէս ասած աշխոյժ թևաւորուած գործունէութիւն։ Խաղալիս մանուկը վայելում է կատարեալ կեանք իւր աշխարհում, յատուկ իւր ստեղծած աշխարհում։ Խաղացող մանկան երեսը փայլում է ուրախութեամբ, եթէ նորան յաջողուելի փայտէ կտօրների օգնութեամբ մի փառահեղ շինք կառուցանել. նա վշտանում է, բարկանում և մինչև անգամ լալիս, երբ անտանելի քամին կործանում է նորա խաղաթթերից շինած տնակը։ Այս ամենը բաւականին պարզ ապացուցանում են, որ գործունէութիւնը ինքն ըստ ինքեան նորան չի բաւականացնում, որ նա հետեւում է որոշ նախագծի և աշխատում է հասնել յայտնի նպատակին։

Ե ի լ լ ե ր ը՝ իւր 15-դ նամակում «մարդուս էսթէտիքական (գեղասիրական) կրթութեան մասին» խօսելիս ասում է. «Մարդս այն ժամանակն է կատարեալ մարդ, երբ նա խաղում է»։ Մեզ թւում է, որ այս միտքը չափազանցացրած չենք լինի, եթէ արտալայտենք ալսպէս։ «Մանուկը այն ժամանակ կատարեալ մանուկ է, երբ նա խաղում է»։ Փոքրիկ մանուկների խաղը նոցա մանկական աշխարհատեսութեան արտայայտնութիւնն է։ Ահա այս բանն է ապացուցանում մանկական խաղի վսեմ նշանակութիւնը և այս տեսակէտից պէտք է քննենք խաղը, եթէ կուզենք որոշել նորա գաստիարակութեան գործին տուած օգուտն ու վնասը։

Ապացուցանելով խաղի վսեմ նշանակութիւնը, անհրաժեշտ կարևոր է աչքի առաջ ունենալ գաստիարակութեան

գործող առարկան և ենթական։ այսինքն՝ զաստիարակին և սանիկին։ Նախ և առաջ այս հարցն առաջարկենք։ Ի՞նչ օգուտ է տալիս խաղը մանուկին։ Կանաչապատ կը պատասխանենք. խաղը ամենալաւ միջոցէ հանգընաթութեան համար։ Մենք տեսնում ենք բնութեան մէջ, ուր էլ չըդարձնէինք մեր ուշագրութիւնը, որ գործունէութիւնը և հանգստութիւնը իրար յաջորդում են։ Աշխատանքին և գործողութեանը յաջորդում է հանգստութիւնը, երբ կորցրածոյթերը վերանորոգւում են և պատրաստում նոր գործունէութեան համար։ Մարդս նոյնպէս ենթարկուածէ այս մշտական օրէնքին։ Նա մինչեւ անգամ ուրիշներից աւելի է պահանջում հանգստութեան ժամեր իւր փեղիքական և մըտաւոր ոյժերը լարելուց լետոյ։ Այս հանգիստը ամենելին չը պէտք է լինի անգործութիւն կամ քուն։ Գործունէութեան փոփոխութիւնն՝ արդէն հանգստութիւն է։ Ուսումնականը, տատիճանաւորը, վաճառականը, որոնք նուիրել են իրենց ժամանակը իւրաքանչիւրը իւր պաշտօնին, հանգստութիւն և ճշմարիտ բաւականութիւն են գտնում աշխատելով պարտիզում։ կամ զբաղուելով ընտանեկան գործերով։ Բակ որ հաճելի հանգստութիւն է գտնում մարդ բոլորովին ոչինչ չը գործելում, այդ շատ վտանգաւոր նշան է ամեն մարդու համար։ Հիանալի է Սենեկա միաքը. «otium sine literis mors est» (առանց գիտութեանց պարապ ժամանակ անցկացնելը մահ է), և նոյնպէս Գէ օթ է ինը. «Անօգտակար կեանքը՝ զաղահաս մահ է»։ Մանաւանդ շատ վտանգաւոր է մանկան համար, երբ նա արթուն եղած ժամանակը ոչինչ չի անում։ Այս պատճառաւ. Հերքարտի պահանջը արգարացի է։ «Մանուկները միշտ պէտք է զբաղուած լինեն, որովհետեւ պարապութիւնը տանում է դէպի անկարգութիւն և սանձարձակութիւն»։ Այնուհետեւ նա շարունակում է. «բայց մանուկը ուսման մէջ միշտ չէ գտնուեմ համապատասխան զբաղմունք»։ Եւ մենք կաւելացնենք, ուսումը միայն այն ժամանակ համապատասխան զբաղմունք չէ լինում, երբ նորան պիտի յաջորդէր հանգստութիւնը, բայց նա դարձեալ

շարունակվում է: Մանուկները այն ժամանակն են միայն ծշմարիտ բաւականութիւն զգում, երբ կարող են սրտանց զուարձանալ, ուրախանալ. երբ կարող են կատարեալ մանուկներ լինել, որոնց հարկաւոր է իրենց առանձին աշխարհը, որպէս զի կատարելապէս երջանիկ լինեն: Մանուկը մեծ մասամբ ինքն է ստեղծում իւր համար այդ աշխարհը: Հասակաւորները այդ բանում կարող են օգնել նորան, ալզպէս ասել, աղիւսներ հասցնելով նորան շէնքը կառուցանելու համար, և մի երկու աղիւս իրանք գնելով, բայց ողջ շէնքի յատակագիծը ամբողջապէս մանկան պէտք է պատկանէ: Եթէ հասակաւորը անկարող կը լինի հպատակել փոքրիկ վարպետի պահանջներին, նա գորանով կ'ապացացանէ, որ գեռ չի հասկացել, թէ ինչ կը նշանակէ մանուկների հետ մանուկ լինել: Համարեա անհասկանալի է թւում, որ շատ քիչ ծնողներ բաւականութիւն են գտնում և սիրում են խաղալ իրենց մանուկների հետ: Դժուար չէ հարցը պարզել. մեծամասնութեանը ոչ թէ պակասում է բարի կամքը, այլ ճշմարիտ վարուել իմանալը: Նատ հայրու մայր կարծում են, որ երեխալին քաղցրաւէնիք տալով, իրանց գործը կատարեցին: Կարող է արդեօք քաղցրաւէնիքը համեմատուել այն բաւականութեան հետ, որ զգում է մանուկը մաքուր օգում խաղալով «ադակապահ-ի» կամ «կացեկ-իսեկ»: Նոցանից իւրաքանչիւրը աւելի յօժարութեամբ կը հրաժարուի ամենահամեղ կերակրից, քան թէ բաց օդում ուրախ խաղից: Մանկական ուրախութիւնը աւելի զօրանում է, եթէ հայրը կամ մայրը ներկայ են կամ մասնակցում են նոցա խաղին: Այս ամեն ասածներիս հիման վերակարելի է ենթադրել, որ «Մանկական պարտէզները» կամ «ծաղկոցները» ամենալաւ միջոցն են ներկայացնում հանգըստութեան համար: Այնտեղ ուրախութիւն է և ցնծութիւն, այնտեղ երգում են, թռչկոտում, այնտեղ մանկավարժական պահանջները լցուցանելու համար կան զանազան խաղեր: Յաւիտենական անմահ անուն վաստակեց այն մարդը, որը ստեղծեց և աղքատ մանուկների համար ապաստանարաններ, ուր նոքա գտնում, են անձնուէր սէր, որը նոցա համար

մալրական սիրոյ տեղն է բռնում: Երջանիկ են այն՝ մանուկները, որոնք մանկական ծաղկոցներում գտնում են հայրական տուն, հանդիպում են բարեսիրտ մարդոց, որոնք եռահզով և զիտակցաբար հոգում են նոցա մասին. բայց աւելի ևս երջանիկ են նոքա, որոնց միշտ հետեւում է մօր սիրատուն աչքը, և որոնք հայրական տանը գտնում են իրանց «մանկական ծաղկոցը»: Մանուկները պէտք է խաղան, բայց նոցա չը պէտք է ստիպել որ անպատճառ խաղան: Ահա հէնց այս հանդամանքն է, որ մանկական ծաղկոցների դէմ հակառակորդներ է ստեղծում: Այնտեղ ոչ միայն թոյլ են տալիս խաղալ, այլ և հրամայում են. այնտեղ ոչ թէ մանուկներն են նշանակում, թէ ինչ և ինչպէս պէտք է խաղան, այլ «տիկին քորիկլը»: Ի հարկէ, և մանկանց ծաղկոցներումն էլ կարելի է հանդիպել ուրախութեան և ցնծութեան, բայց այդ սրտի խորքից բղխած ուրախութիւն չէ: Այն ինչ շատ կարեոր է, որ մանկան կեանքը այնպիսի ուրախութեամբ տոգորուած լինի, որ նորա ձգտումները բորբոքուէին Աստուածալին այդ հրաշալի կայծով: Ինչ որ գարունը բնութեան համար է, ինչ որ առաւօտեան արևը՝ ծաղիկների, —նոյն պէս և ուրախութիւնը մանկական սրտի համար: Ո՞վ որ երբ և իցէ միջոց է ունեցել զիտելու մանուկների կենդանի և աշխոյժ խաղը. ո՞վ որ նկատել է, թէ ինչ լարուած ուշադրութեամբ նոցանից մի քանիսը, մոռանալով թէ ինչ գասակարգին են պատկանում, կատարում են խաղի բոլոր պահանջները. ո՞վ կարողացել է հետամուտ լինել, թէ ինչպէս մանուկների բոլոր մտքերն ու գործողութիւնները կեղրոնանում են մէկ ինչ որ բանի վերալ, այնպէս որ նոքա հազիւ կարողանում են տեսնել և հասկանալ իրենց շրջապատող առարկաներն. ո՞վ վերջապէս վկայ է եղել այն ուրախալի տրամադրութեանը, որ ուրախութեամբ լցնում է բոլոր խմբի սիրտը, երբ որ նպատակին արդէն հասել են, լաղթանակը տարուած է՝—նա, ձեռքը սրտին դրած, կարող է ասել, որ տեսաւ անկեղծ և խսկական ուրախութիւն. նա շատ կարելի է, և կը մտաբերի իւր մանկութիւնը և նորա հոգում արձագանք կը գտնեն բանաստեղծի խօսքերը. «Եր-

Հանկութիւն է, ոհ, երջանկութիւն է գեռ էլի մանուկ լինել»: Բաղտաւոր է նա, ով մանկութեան ժամանակ իրաւունք ունէր բաղտաւոր լինելու:

Մեր ներկայ ժամանակը չի կարող չը յանդիմանութիւն այն պատճառաւ, որ նա շատ և շատ քան է, սովորեցնում: Ուսումնական նոր ծրագիրներ կազմողները կարծես թէ մոռացել են, որ Տէր Աստուածը տուել է մարդուն նաև և մտքին, որը պահանջում է հոգատարութիւն և պահպանութիւն: Սարսափելի է մտածել, քայլ եթէ շուտով չեն թողնի, ընտրած սխալ ճանապարհը, այն ժամանակ մերձ է վըտանգը, որ մեր ժամանակի կրթութեան արդիւնքը կը լինին ուսումնական անդամալոյթներ: Խաղը, իբրև հանգստութեան միջոց, չի թոյլ տրւում, մինչև անգամ խաղի ժամանակն էլ աշխատում են աւանդել մանուկներին զանազան գիտութիւններ: Առանձնասենեակներում պարապիղ մեր ուսումնականները, ի հարկէ չեն մտածում, որ այս ամենը ցանկացածի փոխարէն բոլորովին հակառակ արդիւնքների են հասցնում: որ այդպիսի միջոցներով կարելի է զարթեցնել մանուկների մէջ՝ ատելութիւն դէպի գիտութիւնները, որի առաջն այնուհետեւ գիտուար կարելի է առնել: Թո՛ղ նոքա լաւ մտաքերեն Ավինափիանի գեղեցիկ խօսքերը. (inst. I, IV) nām id in primis cavere oportebit, ne studia, qui amare mōndum potest, oderit, et amaritudinem semel perceptam etiam ultra rudes annos refermidet»: («Ամենից առաջ հարկաւոր կը լինի նախազգուշանալ, որ նա, որ երբ և իցէ կարող էր սիրել զբաղմունքները, բոլորովին չ'ատէր նոցա. և որը չը երկնչէր մի անգամ զգացած կոկծից, մինչև անգամ իւր համար տաժանելի ժամանակից լետոյ էլ»):

Բայց և այնպէս, մենք միայն խօստովանում ենք մի ճշմարտութիւն, յալտանելով որ խաղի նշանակութիւնը, իբրև հանգստութեան միջոցի և իբրև մանկական ամենամոքուր ուրախութեանց աղբիւրի, մեր օրերում ըստ բաւականին բարձի: Թողի է առնուած: Այն ինչ այս հանգամանքը գոնէ մանկութեան առաջին տարիներում արժանի է առանձին ուշադրութեան: առաջնաւայր ունենալու համար այս գործառություն նախքան

Ն Ե Ւ Ե Ր Մ Ո Ւ Ե Ր Ը սորա մասին պարզ այսպէս է ասում. «Մանկական խանգարում է այն ամենին, ինչ ոք ստիպում է նորան դործել որ և է հեռաւոր նպատակի համար: Առ հասարակ մանկութեան շըջանը խաղի մէջ է արտայաբառում»: Աւքեմն թող ամենքը ըստ չափու կարողութեան նպաստեն, որ մանկական ծշմարիտ և անկեղծ ուրախութեանց աղբիւրը մանուկներից երբէք չը ցամաքի, որպէս զի նոքա ծերութեան հասակում ուրախութեամբ լիշեն իրենց մանկութեան ժամանակ անցուցած ուրախ և երջանիկ օրերը:

Ասածներիս կաւելացնենք:

Խաղը ամենաընտիր կրթողական միջոց է: Վերջին ժամանակներում շատ լաճախ այն միտքն էին պարզում, որ դպրոցը միայն այն ժամանակ կարող է հասնել իւր վսեմ նպատակին, եթե ընտանիքը նորա հետ ձեռք ձեռքի տուած կ'ընթանալ. բացատրում էին նոյնպէս և այն, որ կրթական գործունէութիւնը պէտք է սկսուի մանկան ուսումնարան մտնելու օրից: ծշմարտութիւնը պահանջում է նկատել, որ մեր ժամանակներում հասարակութեան ըոլոր դասակարգերը առաւել շատ են հետաքրքրում դպրոցական խնդիրներով և ըստ չափու կարողութեան նպաստում են իրազործելու նորա ազնիւ ձգտումները: Նոյնպէս արդարացի են և ուսուցիչների գանգատները, որ ընտանիքում մեծ մասամբ այնպէս չեն նախապատրաստում մանուկին դպրոցի համար, ինչպէս հարկն է: Մի քանիսները չափազանց շատ են աշխատում, միւսները շատ սակաւ. մի ընտանիքում կրթում են վաղ հասունացած մանուկներ, միւս ընտանիքում ամենեին ուշք չեն դպրոց նոցա վերայ: Այսպիսի փաստերը աչքի առաջ ունենալով ի դէպ կը լինի այս հարցն առաջարկել. ինչպէս պիտի ուսուցանեն ծնողները այն մանկան, որին պէտք է դպրոց ուղարկեն: Պատասխանը կարճ և համոզեցուցիչ կը լինի, — նորան պէտք է ուսուցանել տէր լինել իւր զգայարանքների: Միթէ կարելի է արդեօք ուսանել տիրել տեսանելեաց, լսելեաց վերայ և տվլն, կը հարցնէ ընթերցողներից մէկը: Կարելի է, կը պատասխանենք մենք, և այս նպատակին հաս-

նելու ամենալաւ միջոցը՝ խաղն է։ Ենթադրենք, որ գարուն է, դուք քաղաքից դուրս զցունում էք կանչազարդ դաշտում։ Դուք վայելում էք դիցուք թէ, ծաղիկների անուշահոտ բուրմունքը, հիանում էք գոյների հրաշալի դասաւորութեամբ։ Դուք տեսաք համեստ մանուշակը, գտաք հօշհօշը, խնկան ծաղիկը ևալն։ Բայց ահա մի գեղեցիկ ծաղիկ և դուք նորան միայն այն պատճառաւ չեք նկատում, որ չեք ճանաչում։ բայց հենց որ ես ձեզ ծանօթացնեմ արդ ծաղկի հետ, դուք առաւել շուտ և առաւել լաւ կը նկատէք նորան։ Դուք, ի հարկէ, կը հասկանաք, որ մենք տեսնում ենք միայն այն, ինչ որ գիտենք։ Մի և նոյնը կարելի է ասել և լսելեաց համար։ Ով որ չի կարողանում երգող թուչունների դալլալիկը զանազանել, նա աչքից թողնում է երգի մասնաւոր նրբութիւնները, և թեաւորների նուագահանդէսները լսելով, նա ել և էջները չէ ըմբռնում, ինչպէս կարող էր հմուտ երաժիշտը, որ երգեցողութիւն լսելով ճանաչում է և երգչին։ Դուք այժմ, ի հարկէ, տեսնում էք, թէ ինչպէս խաղի միջոցով կարելի է մանկան հասցնել կատարելապէս տիրելու իւր զգալարանքներին։ Նոյն իսկ ընութիւնը, որ իւր մշտնջենական շարժողութեամբ ցոյց է տալիս առարկաների գոյութիւնը, սկիզբն և վաղճանը, ամենից աւելի ընդունակ է բանալու մանկան ականջն ու աչքը։ Տարէք նորան դաշտը, ցոյց տուէք նորան քամիից ծածանուղ կանչազարդ արտօրալքը. ցոյց տուէք նորան, թէ ինչպէս երկրագործը հնձում է յորենը, խուրձեր է կապում. և տանում դիզում շտեմարանը. ինչպէս հասկերից հանում են հատիկները. տարէք նորան աղմկալից ջրալացը և ցոյց տուէք թէ ինչպէս դեղին հատիկներից ստացվում է ալիւր. ցոյց տուէք նորան վերջապէս թէ ինչպէս հացիտուխը պատրաստում է նորանից համեղ հաց։ Եւ հաւատացած եղէք, որ նա արդ երեկոյին մեծ բաւականութեամբ կուտէ իւր հացը. չէ որ նա իմացաւ թէ, քանի մարդկային ձեռքեր պիտի աշխատէին, նախ քան մալրիկը կը յագեցներ նորա քաղցը համեղ իւղաւի հացով։

Խաղը նպաստում է թէ ֆիզիքական և թէ մտաւոր

ընդունակութեանց զարգացման։ Եղբ մանուկները բաց երկնքի տակ ազատ խաղում են, յաղթանակը սովորաբար նաէ տանում, ով աւելի ուժեղ և ճարպիկ ձեռքեր ունի և առողջ ոտներ։ Այդտեղ պէտք է ձեռքի ոյժով դիմադրել հակառակորդի հարուածին, ճարպիկութեամբ դուրս պըծնել որսորդի ձեռքից, բոլոր ոյժերը լարել ամենից վաղ հասնելու նշանակած նպատակին։ Ամենուրեք ոյժը և ճարպիկութիւնը չեն գերազանցում. օր. գնդախաղի ժամանակ լաղթում է վարժ աչքը և հանգիստ հաշիւը, աչքակապուկի ժամանակ՝ նուրբը լսելիքը և ալլն։ Եւ խաղի մէջն արգէն սովորում է մանուկը դիմանալ փոքրիկ անյաշողութիւններին և աննշան ցաւի. շատ անգամ քամին, վատ եղանակը, ձիւնըն ու ցուրտը կրկնապատկում են նորա ուրախ տրամադրութիւնը, իսկ շոքերն ու ցուրտը նորան չեն վախեցնում։ Բացօդեայ խաղերը, որոնք սերտ կապուած են կռուի, մենամարտութեան և մըցման հետ, գլխաւորապէս տղաների համար են նշանակուում, թէև օրիորդներն էլ չը պէտք է բոլորովին բայցառութիւն կազմեն։ Դժբաղտաբար, գեր էլի քիչ չեն այնպիսի մալբեր, որոնք աւելի իրենց աղջկանց երեսի գեղեցկութեան, քան նոցա առողջութեան մասին են հոգում։ Յուրախութիւն մեր մատաղ սենդի, ամենանոր մանկավարժութիւնը դպրոցական մարմնաբզութիւնը մացնելով, հոգաց նա և օրիորդների ֆիզիքական զարգացման մասին։ Միայն միակողմանի մանկավարժութիւնը կարող է մերժել Փիզիքական կրթութեան կարևորութիւնը։ Մարդս, որի կոչումն է արարչագործութեան թագն ու պատակը լինելու, իւր վեհ նպատակին հասնելու համար պէտք է հոգայ նա և իւր Փիզիքական ոյժերը զարգացնելու։ Այստեղ մանկական խաղն էլ կարող է մատուցանել իւր ծառայութիւնը։

(Ար շարումնակուիր.)

Թարգ. Գ. ՇԱՀԲՈՒԴԱՐՆԱՑ

## ՄԱՅԱՑՈՒՑԱԿ



Ըաստ ժամանակ չ'անցաւ այն օրից, երբ «Ա արժարապատճը» գումար իւր ընթերցողներին մանկավարժ Ա. ԲԱՀԱԹԻ-  
ՐԵԵՆԻ մահը և ահա ցաւօք սրտի յայտնում ենք, որ  
Հայ-դպրոցական գործը դարձեալ մի զգալի կորուստ ունեցաւ,  
ներկայ 1883 ամի Մարտի 29-ին, Առաջախու գաւառի Քար-  
վանսարայ գիւղում միամեայ ծանր հիւանդութիւնից յետոյ  
վաղձանուեցաւ Առվկասի Հայ-Հասարակութեան լաւ յայտնի  
ուսուցիչ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԻՄԵՈՆԵԱՆ 44 տարեկան հասակում:

Հանդուցեալը իւր սկզբնական ուսուումը ստացել էր Թիֆ-  
լիսու Ներսիսեան Դպրանոցում, ուր յաջողութեամբ աւար-  
տելուց յետոյ մտնում է Մտարապօլի գիմնազիօն: Դիմա-  
զիօնի վարչութեան ուշագրութիւնը դառնում է երիտասարդ  
Սիմեօնեանի մաթեմատիքայի մէջ ունեցած ձիրքերի և ընդու-  
նակութեանց վերսյ: Այստեղ աւարտելով իւր ուսման ըն-  
թացքը, մտնում է Գետերբուրգի Համալսարանի ֆիզիք-մա-  
թեմատիքական բաժինը, ուր աւարտելով ուսման ընթացքը,  
վերջնական քննութիւն պիտի տար, բայց տկարութիւնը ստիպեց  
նորան վերադառնալու հայրենիք:

Ներսիսեան Դպրանոցի վարչութեան ուշքը դառնում է  
դէպի Մարտիրոս Սիմեօնեանը և վերջինս հրաւիրվում է Պըպ  
րանոցում մաթեմատիքայ աւանդելու: 14 տարի անխոնչ աշ-  
խատութիւնից յետոյ, Մ. Սիմեօնեանը հրաւիրվում է Գէոր-  
գեան Ճեմարանը, ուր երեք տարի շարունակ ֆիզիքա և մա-  
թեմատիքայ էր աւանդում, բայց նորա կեանքի վերջին տարին  
դաժան թոքախտը ստիպեց նորան բոլորովին թողնելու ու-  
սուցչական ծանր պաշտօնը: Հանդուցեալ Մ. Սիմեօնեանը  
Թիֆլիսի Ս Գայիսեան Օրիսրդաց Միջնակարգ ուսումնարանի  
հիմագիրներից մէկն էր: ուր 7 տարի շարունակ ձրիապէս  
դասատւութիւն էր անում և մինչև մահը նա կոչվում էր Աւ-  
սումնարանի վարչութեան անդամ:

Բացի ուսուցչական ծանր պարտաւորութիւնները կա-

տարելուց հանգուցեալը իւր ազատ ժամերը նուիրում էր Հայ-գրականութեան: Նա «Հիւսիսափայի» ընտիր աշխատա-կիցներից մէկն էր, նա թարգմանեց Եղիշէի «Ա, արդանանց Պատերա զմի» պատմութիւնը աշխարհաբար լեզուով, մի ընդարձակ գեղեցիկ յառաջարանով: Նա աշխատասիրեց և լցու ընծայեց «Թասագիրք թուաբանութեան» ուսուց չաց համար ձեռնարկը, «Թուաբանական ինդիրների» ժողովածուի I և II մասը, որոնք քաջ ծանօթ են Հայ-գպրոց-ների ղեկավարներին:

Բացի այս հանգուցեալը, թողել է բաւականաչափ ձեռագիր աշխատութիւններ, մաթեմատիքայի, Փիզիքայի, Փիզիքական աշխարհագրութեան և Տիեզերագրութեան վերաբերեալ:

Հանգիստ ոսկորներից, անխոնջ մշակ հայ մանկաւոյ դաստիարակութեան քուսուրը, յիշատակը, անջնջելի կը մնայ քո աշակերտեալների, սրտերում:

## ԱՅԻ ԵՒ ԱՅԼՔ

Բառապատճեննեւու աղջային լորժութենում: Բոյսերը իրանց բազմատեսակ դժոյներով, կազմուածքներով և ձեւերով մի պատուական և առատ նիւթ են տալիս աշակերտի զգայարաններն և ոգին կրթելու համար: Զննելով բոյսի ստուերագծերն և մասերը, աշակերտը տպաւորում է իւր ոգու մէջ նորա պատկերը և պահպանում է նորան նա և երբ տեսանելի բոյսը այլ ևս աչքի առջև չէ: Այսպիսով ուշադրութեան է սովորում, զօրանում և կազդուրվում է աշակերտի ոգին, զօրութիւն է ստանում և զբաղվում է նորա յիշուլութիւնն և երևակայութիւնը, որովհետեւ նա ստիպվում է անջնջ պահպանել ոգու մէջ բոյսերի պատկերները և ըստ հաճոյից կենդանացնել նոցա, որպէս և սերտել նոցա անունները, նոցա յատկութիւնների և նշանների ածականները:

Մի քանի բոյսերի պատկեր իւր մտքի մէջ ամփոփելուց յետոյ, աշակերտը սկսում է միութեան և կարգի բերել նոցա: Այս բանը նա կատարում է համեմատելով և զանազանելով, էական և պատահական յատկանիշները իրարուց զատելով: Նորա մտքի մէջ ծագում են համանման բոյսերի խմբեր և յառաջ են գալիս ընդհանուր մտապատկերներ—գաղափարներ: Կյա վիրջին ոգեկան գործողութեան համար հարկաւոր է առաւել մեծ ձգնութիւն և ոյժ, քան թէ միակ մի պատկերի ըմբռնման համար, ուստի և բուսաբանութեան ուսումը մտածողութեան մեծ կորով է պահանջում աշակերտից:

Թէ ի՞նչ զուարձութիւն է ընծայում աշակերտին գեղեցիկ ձեւաւորուած բողբոջների և ուրիշ բուսական մասերի զննութիւնը, այդ ամեն մի բուսասէր ինքն զգացած կը լինի: Բոյսերի հրաշալի նկարներն և կազմուածքը անհրաժեշտ կերպով յարուցանում են և զարգացնում աշակերտի մէջ գեղեցիկ ճաշակը: միայն թէ վարժապետը իմաստօրէն զիտել տար նորան սյդ բոյսերը: Ի՞նչ բան կարող է սիրուն ձեւերի նկատմամբ առաւել ձոր նիւթ շնորհել առաւել էսթետիքական հրապար և վայելք աղդել մարդուս քան թէ բուսաբանութիւնը:

Որքան որ ընդարձակուի աշակերտի ծանօթութիւնը բոյսերի հետ, այնքան էլ կաճի նորա սէրը գէպի կենդանի բնութիւնը, իսկ մի անգամ բնութեան համար սէր զգալուց յետոյ, նա կը սիրէ և նրարջին, որ բարձրաձայն բարբառում է բնութեան մէջ, որի մե-

ծութիւնը խօսում է ամեն մի ծաղկից՝ ամեն մի ոստից և ընձիւ-  
զից. Ուր որ աէր է յարուցվում դէպի Աստուած, ասել է թէ այն-  
տեղ աշակերտը ստանում է և բարսյական կրօնական կրթութիւն։  
Բուսաբանութեան նիւթական նպատակը կապ. ունի այն ամեն  
բաների հետո ինչ որ կարելի է իրագործել կեանքի մէջ նորա միջ-  
նորդութեամբ։ Գլխաւորապէս այդ նիւթական նպատակին արժէք  
ընծայող վարժապետը կաշխատէ ի հարկէ այնպիսի բոյսեր զնել  
տալ և ուսումնամիբել։ որոնց հետ անշուշտ պէտք է ծանօթանալ  
աշակերտին։ Նախադասելով օդուակարները, ջոկելով վեսասկար-  
ները և մեկուսի թողնելով ոչ շատ կարելո՞ները։ Կա ցցց կը տայ,  
որ մարդուն կեանքը վերին աստիճանի մեծ կախումն ունի բոյսե-  
րից։ և կը հասկացնէ, որ բոյսերը մատակարարում են մեղ սնունդ,  
հագուստ և գեղօրայք և փայտ են տալիս մեր բնակարանների,  
անթիւ գործիքների և անօթների համար։ Քոյսերի շնորհավ ծաղ-  
կում է առևտուրը և մարդիկների հաղորդակցութիւնը։ Քոյսերի  
օդուակարութիւնը ուսումնամիբելիս պէտք կը լինի հարկաւատան-  
ձին ուշադրութիւն դարձնել մանաւանդ պտղաբեր ծառերի վրայ,  
որպէս զի աշակերտը հանկացողութիւն ունենայ պարտիզանու-  
թեան մասին և մի անշիջանելիս սէր ստանայ օդուաւէտ ծառեր ար-  
կելու ուժեղ և միջոց գտնէր։

Աւերցիշեալ կարգով և եղանակով բառարանութեան հիմ  
փոքր իշատէ ծանօթանալուց յետոյ, աշակերտը կը սկսէ զայելել  
մի առաւել բարձր ոգեկան կեանք. նա կը սովորէ կարգալ իրան  
շրջապահող բուռական աշխարհը իբրև մի ընտիր մատեան, որի  
մէջ մարդս պարտական է առաւել և առաւել խորասուզութիւն նորա  
մէջ թաքնուած բոլոր սրանցիւքը լաւ ճանաչելու համար:

(Repertorium der Paedagogik.)

Φ. Ψ.

Գիտենալ եք ԿԱՐԵՆԱԼ:

Ոգեկան զօրութիւնը յառաջ է գալիս միայն մարզմամբ դիտութիւնների գործադրութեան մէջ:

Ամեն մի վարժապետ կարող է տպաւորել աշակերտի՝ մտքին այլ և այլ գիտութիւններ. սակայն լաւ վարժապետը միայն ձեռն-հաս է անպէս անել, որ տշակերտին ցաղորդուած գիտութիւնը

նաև ինքնագործունեութեան ոյժ և զօրութիւն յարուցանէ նորա մէջ։ Հաւ վարժապետը միայն ընդունակ է շարժողութեան մէջ ձգել աշակերտի գիտութիւնները, գեպի գործունեութիւն, մղել նորա կամքը։ Մի վարժապետ, որ հոդ չէ տանում կամ թէ անկարող է ինքնագործունեութեան զօրութիւն և տեսչ վառել աշակերտի մէջ, վրիպումէ իւր նպատակից։ Նոյնը պէտք է ասել ընդհանրապէս և ամեն մի վարժարանի մասին։

Աշակերտի բնաւորութիւնը միայն այն ժամանակ է զարգանում մաքուր և զօրեղ կերպով, երբ պարտուպատշաճ գրգիռ և սնունդ է տրվում նորա ինքնագործունեութեան ուժին։ Մի քանի աշակերտների վրայ այս փոխագարձ ներգործութիւնը վաղ և շուտ է նշմարվում։ միւսներին գալով մեծ համբերութիւն և երկարատև մարզմոնք է հարկաւոր։ Սակայն ամենքի մէջ էլ ինքնագործունեութեան պահանջը կայ ու. կայ հէնց մանկութեան օրից, ասես թէ մայր բնութիւնը ինքն գրած լիներ նոցա մէջ այդ պահանջը, ինչպէս որ դրած է առձեցման ոյժը սերմերի մէջ։

Ուրեմն պէտք է խնամք տանել որ այդ պահանջը չը թմրի։ Աւարժապետը թող միշտ յիշէ այս կանոնը, թէ գիտութիւններն ինքն ըստ ինքեան գեռ մի մեծ բան չեն, այլ թէ նորա այն չափով միայն արժեք ունին, որ չափով որ զօրութիւն են դարձել աշակերտի մէջ ի ձեռն մարզման և գործադրութեան։

Չամ բան գիտենալը գեռ չէ նշանակում նա և կարենալ շատ բան։ Պիտանի մարդ միայն այն աշակերտը կը դառնայ, որի մէջ գիտութիւնն և կարողութիւնը զուգընթաց և հաւասար չափով են զարգացած։

(Erziehungsblätter).

Փ. Ա.

Խմբագրութիւնս ստացաւ պ. Կ. Տէր Աւոնդեանի աշխատասիրած՝ «Մայրէնի լեզուի տերականութեան բարերէց» I. մասը. Գինն է 30 կոպէկ։ Ամսագրիս յաջորդ Նոն-ից մինում կը ծանօթացնենք ընթերցողներին այդ աշխատաւթեան հետ։

\* \*

Խմբագրութիւնս ստացաւ պ. Տօքթօր Եւթիւնեանի հրատարակած «Ժողովրդական Մատենադարանի» I և II հատորները. «Պատմուստ և իւր օդապիւր թիւնը» և «Ականոյ և զանոնի առողջ պահելու Քննութը»։ Յարգելի հրատարակչին պատահական և առող-

Հապահական գաղափարները տարրացնել ժողովրդի մջ և սյդ նպատակին հասնելու համար ոչ մի միջոց չի խնայում թէ նիւթը և թէ տարեկան հրատարակութեան բաժանորդագինը (1 ր-20 կ.) ամենի համար մատչելի անելու, Հրաւիրում ենք ընթերցողների ու շաղրութիւնը սոյն հրատարակութեան վերայ, Ցիշեալ գրքայները ձեռք բերել ցանկացողները կարող են դիմել „Ա արժար արանի“ խմբագրութեան։

\* \*

Խմբագրութիւնս ստացաւ „Ա զրիւր“ ամսագրի № 3 ը։  
Պ. Զ. Գրիգորեանից նորա աշխատասիրած՝ „Ուսուցիչ Ռուսաց  
լեզուի“ գասագիրքը, և պ. Յ. Կաղարեանից նորա աշխատասի-  
րած՝ Անեկտօսների 3 դ հատորը։

\* \*

Խոնարհար խնդրում ենք պ.պ. Թեմական վերատեսուչնե-  
րին, որոնց ուղարկութենք ձրիաբար Արժարանի մանկական  
բաժնի №№ ը հայոց գալոցներում տարածելու, հաղորդել Խմբա-  
գրութեանս թէ որ գալոցին և քանի օրինակ է հասնում, որպէս  
զի եկող տարուայ համար հրատարակելի օրինակների քանակու-  
թիւնը ճշտութեամբ որոշուի։

\* \*

Խոնարհար խնդրում ենք մեծարդոյ պ.պ. Թեմական վե-  
րատեսուչներին, որ նոքա բարեհամար հաղորդել Խմբագրութեանս  
իրենց թեմերում գտնուած հայ-դպրոցների ցուցակը, աշակերտ  
ների թիւը, ուսուցիչների ստացած ուղարկութեալն, եթէ միայն  
հնարաւոր է։


Խնդրում ենք «Արժարանի» յարգելի ընթերցողներից ուղղել  
հետեւալ վրիպակը, որ մտել է ամսագրիս 7-դ համարում երես  
43, առաջ վեցերորդ ներքենից։

Տպառած է.

Պետք է վարդաւ։

Ժիւլ Գէրբին բաժանեց կրթու-  
թիւնը, տարբերուելով մինչեւ  
այժմ եղած գրութիւնից, որ կո-  
չուած է

Ժիւլ Գէրբին բաժանեց սյդ  
կրթութիւնը երեք շրջանի, որոն-  
ցից իւրաքանչեւրը, տարբերուե-  
լով մինչեւ այժմ եղած գրու-  
թիւնից, կոչուած է



## «ՎԱՐԺԱՐԱՆԻ» ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ

**ՎԱՐԺԱՐԱԾԱՊԱՏ. պ. Ս. Ա.-ին:** Զեր բանաստեղծութիւնը «Սերմնացան» վերադրով կը տպագրենք:

**ԵՐԵՒԱՆ. —պ. Ս. Բէդ. Յ.՝** Յնդունեցէք խմբագրութեանս խորին շնորհակալութիւնը զեր «Վարժարանին» ցոյց տուած համակրութեան, եւ անձնաւէք աշխատութեան համար:

**ՔՈՒԹ. ԱՑԻՍ. —պ. Յ. Ա.-ին:** Զեր յօդուածը՝ «Մի քանի խօսք մեր ուսումնարաններում երգեցողութիւն աւանդելու մասին» չենք տպի:

**ՔՈՒԹ. ԱՑԻՍ. —Նոյն:** Զեր Թարգմանած՝ «Մանկական խաղներ և նոցանշանակութիւնը» վերնագրով յօդուածը չենք տպի, որովհետեւ թէ Թարգմանական ոճը եւ թէ մոքերի նշտութիւնը չեն համապատասխանում բնագրին:

**Թ. Կ. Լ. Դ. —պ. Գ. Շ.** Զեր Թարգմանած՝ «Մանկական խաղներ և նոցանշանակութիւնը» վերնագրով յօդուածը խմբագրութիւնը լինի կարգին համապատասխան գտաւ բնագրին եւ յարմար գատեց տպագրելու «Վարժարանին» ներկայ № ում:

**ՄՈՍԿՎԱ. —պ. Ռէմելին:** Զեր ուղարկած մանկական առածը՝ «Պառանու և հաւը» չենք տպի:

**Դ. Ք. Զ. Ը. ՀԱՆՉԱՆ. —պ. Ա. Յ. Ի.՝** Մենք չենք կարող «Վարժարանին» հայոց տպարկեւ, քանի որ բաժանորդագրինը չենք ստացել:

**Դ. Ա. Ր. Ս. —պ. Գ. Ե.՝** Զեր «Կոտորակների գործողութեանց մասին» յօդուածը կը տպենք ամսագրիս յաջորդ № ում:

---

—♦♦♦—

**ԽՄԲԱԳԻՔ ՀՀԱՏԱՐԱԿՈՂ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ**

---

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Апрѣля 1883 г.

Типографія М. Вартанянца и К. Троцкаг. пер. № 11.